Մեր հարցին ի պատասխան ՊՆ-ից հաղորդել են, որ մեր կողմից պահանջվող տեղեկատվության տրամադրումը մերժվում է, քանի որ այն, ըստ Տեղեկատվության ազատության օրենքի, պարունակում է պետական գաղտնիք: Մինչդեռ վերջին ասուլիսում Սուրեն Պապիկյանը պատասխանեց նույն հարցին, որը, փաստորեն, ոչ մի պետական գաղտնիք էլ չէ:

Կարդացեք՝ էջ 4

Եվրոպական երկրները, որոնք ֆինանսական վատ վիճակում են, չեն ուզում հավելյալ գումար վճարել ԱՄՆ ստեղծած հիմնադրամին, որի մշտական անդամակցության համար պետությունը պետք է 1 միլիարդ դոլար անդամավճար մուծի: Հարց է առաջանում, իսկ որտեղից Հայաստանին 1 միլիարդ դոլար խաղաղության խորհրդի անդամ դառնալու համար:

Կարդացեք՝ էջ 5

Բոլոր երկրներում, որտեղ իշխանությունը պետությունը տարել է քաղաքական ինքնուրույնության կորստի, կիրառվել է նույն սխեման՝ հասարակություններին վախի ներշնչում «ռուսական սպառնալիքով», անվտանգության ավանդական ճարտարապետության կոտրում, կախվածություն կենտրոններից, որոնք ուղղված են պետության ապամոնտաժմանը:

Կարդացեք՝ էջ 8


# Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 2 (4117), 21 հունվար, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Դեկտեմբերին «Մեր ձեւով» շարժումը հայտարարել էր, որ հունվարին պարզ կլինի, թե ով է լինելու վարչապետի իրենց թեկնածուն: Երեկ շարժումն իր տնտեսական ծրագիրը հրապարակեց, պանելային քննարկում անցկացրեց, եւ շարժման համակարգող Նարեկ Կարապետյանը ասուլիս տվեց, սակայն դարձյալ չհրապարակվեց թեկնածուի անունը: Հայտարարվեց, որ փետրվարի 12-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցության հիմնադիր համագումարի օրը, կհայտարարեն վարչապետի թեկնածուի անունը: Նարեկ Կարապետյանը հավելեց նաեւ, որ վաղուց են որոշել թեկնածուին: Անցած ամիսներին խոսակցություններ կային, որ վարչապետի թեկնածուն հնարավոր է լինի նախկին վարչապետ Կարեն Կարապետյանը, եւ իշխանական քարոզչամեքենան էլ վայրի արշավ էր սկսել նրա դեմ՝ սեւ քարոզչություն էին անում, քրեական վարույթներ ծրագրում, սակայն տեղեկություններ ունենք, որ Կարապետյանը չի կարող առաջադրվել՝ նա վարչապետի թեկնածու առաջադրվելու ցեղզին չի համապատասխանում: Մասնավորապես, վերջերս խախտել է մեկ տարվա ընթացքում 6 ամիս ռեզիդենտ լինելու՝ Հայաստանում ապրելու ցեղզը: Ընդ որում, տեւական ժամանակ պահպանել է, իսկ վերջերս՝ գուցե անգամ միտումնավոր խախտել, որ անհաղթահարելի խոչընդոտ ձեւավորի եւ անհնարին դարձնի իր առաջադրումը: Հիշեցնենք. միայն ՀՀ քաղաքացի լինելու եւ տարվա առնվազն կեսը (առնվազն 180 օր) Հայաստանում բնակվելու պահանջը պարտադիր է պատգամավորի, վարչապետի թեկնածուի համար: Այսինքն՝ վերջին 4 տարիների ընթացքում մարդը պետք է տարվա մեջ 6 ամիս բնակված լինի Հայաստանում: Իսկ Սամվել Կարապետյանը մի քանի երկրի քաղաքացի է եւ կարող է լավագույն դեպքում ավագանու ցուցակում ընդգրկվել: Ըստ ամենայնի, թեկնածուն կլինի Նարեկ Կարապետյանը, որն արդեն հասցրել է լայն ճանաչում ձեռք բերել եւ հանրության համակրանքը նվաճել:

Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Արթուր Օսիկյանը 2025-ի օգոստոսի վերջին դիմել է ՀՀ վարչական դատարան եւ հայց է ներկայացրել ընդդեմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության: Ըստ հայցադիմումի՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցները նրան տուգանել են 10 հազար դրամով եւ բալային համակարգով նրա վարորդական իրավունքից հանել են տուգանային 1,5 միավոր: Տեղեկացանք, որ գեներալ-մայորը դատարանում հաղթանակ է տարել ՆԳՆ-ի նկատմամբ: Դատավոր Մհեր Պետրոսյանն ամբողջությամբ բավարարել է հայցը՝ անվավեր ճանաչելով պարեկների որոշումը:

## Մայր օրենքը չի գործում

Ինչ-որ պահից այս իշխանությունը դադարեցրեց մայր օրենքի՝ Սահմանադրության գործողությունը մեր երկրի տարածքում: Բացեք Սահմանադրության տեքստը եւ անաչառ հայացքով կարդացեք այն, կտեսնեք, որ հոդվածների մեծ մասն այլեւս չի գործում ՀՀ տարածքում: Հայաստանն այլեւս սոցիալական պետություն չէ, քանի որ անգամ նվազագույն պարենային զամբյուղը պետությունն իր քաղաքացիների համար չի ապահովում՝ թոշակն ու նպաստը զամբյուղի ապահովման համար բավարար չեն: Չի գործում սեփականության անձեռնմխելիության իրավունքը՝ ցանկացած պահի իշխանությունը կարող է մարդու սեփականությունը խլել, եւ դրան «օգնում» է ոչ միայն խիստ վիճահարույց «Ապօրինի գույքի բռնագանձման մասին» օրենքը, այլ նաեւ կամայականորեն ընդունված տարբեր որոշումներ: Օրինակ, այն որոշումը, որը կայացրին 2018-ին՝ վաղաժամ խզելով «Սանիթեք» ընկերության պայմանագիրը, կամ՝ 2025-ին՝ խլելով ՀԷՑ-ը: Սահմանադրությունը չի գործում՝ սկսած իր նախաբանից. Անկախության հռչակագրից: Հայաստանի Հանրապետությունը խախտեց ՀՀ Սահմանադրությունը, երբ հրաժարվեց լինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխավորը, հրաժարվեց Ցեղասպանության ճանաչման գործընթացից: Բայց Սահմանադրությունը հատկապես ոտնահարվում է մարդու իրավունքների եւ ազատությունների հետ կապված դրույթների մասով: Մարդը Հայաստանի Հանրապետությունում այլեւս չունի ազատորեն իր կարծիքը հայտնելու, խաղաղ ակցիաներ ու հավաքներ անելու, անգամ ընտրվելու իրավունք. ՏԻՄ ընտրությունների արդյունքների ոտնահարումը՝ ձեզ վկա: Սահմանադրությունը խախտվում է նաեւ Եկեղեցի-պետություն հարաբերությունների մասով՝ Նիկոլ Փաշինյանի թեթեւ ձեռքով Հայ առաքելական եկեղեցին զրկվել է իր բացառիկ առաքելությունից եւ պետությունից անջատ գործելու իրավունքից:

*ՔՊ-ում, ըստ ամենայնի, որոշել են պատգամավոր Հայկ Սարգսյանին ոչ միայն «գծերից գցել»՝ մերժել պատգամավորական թեկնածության հայտը, այլեւ իրավական գործընթաց սկսել նրա նկատմամբ: Մենք տեղեկացանք, որ Հովիկ Աղազարյանի գործով դատական վերջին նիստի ժամանակ մեղադրող դատախազը հնչեցրել է նաեւ Հայկ Սարգսյանի անունը, մասնավորապես, ոչխարների վերաբերյալ կաշառքի հայտնի գործով նիստին հեռախոսային խոսակցությունների վերծանություն է ներկայացրել դատարանում, որտեղ ոչ այնքան Աղազարյանի անունն է հիշատակվել, որքան Հայկ Սարգսյանի: Պարզվում է՝ գործով անցնող Սլավիկ Կարապետյանն իր աներոջ՝ Աշոտիկ Կամավոսյանի հետ հեռախոսազրույցում հիշատակել է Շիշ բռնողի անունը, ասել, որ Սլավիկ Պողոսյանի հետ գնացեք, Սեւանում Աղազարյանի հետ հանդիպեք, ապա հավելել է, որ Շիշ բռնողն էլ է այդտեղ լինելու՝ նախկինում ոչխարների թեմայով ինքն է զբաղվել:*

## ՍԿԶԲՈՒՄ ԿԸՆՏՐԵՆ 50 ՀՈԳԻ, ՀԵՏՈ ԷԼԻ 50

Նախնական որոշմամբ՝ փետրվարի 15-ին տեղի կունենա ՔՊ համաժողովը, որի ընթացքում նախնական կձեւավորվի ՔՊ ցուցակը: Ինչպես գրել էինք, համաժողովի հազար պատվիրակները 50 հոգու են ընտրելու՝ գրանցված 280 թեկնածուների ցանկից: Հիշեցնենք, որ պատգամավորության համար առաջադրվել էր 380 անձ, որոնք նախ ֆիլտրվել են վարչության կողմից՝ հարյուր հոգի կտրվել է քննությունից, գրանցվել է 280 թեկնածու: Համաժողովի յուրաքանչյուր պատվիրակ կարող է 50 հոգու ընտրել, ըստ այդմ էլ կձեւավորվի նախնական ցուցակը: Սակայն քանի որ Փաշինյանը որոշել է ժողովրդավար երեւալ, բայց նաեւ ցուցակը կազմելու հարցը չթողնել շարքերին, ուստի խորամանկ սխեմա են մտածել: Սկզբում համաժողովը կընտրի 50 առաջին համարներին՝ առանց ցուցակը կազմելու, ապա կլինի երկրորդ փուլ. մի համաժողով կամ համագումար էլ կանեն, հավանաբար՝ մարտի կեսերին, եւ կրկին պատվիրակներն ընտրություն կանեն, բայց միայն առաջին հիսուն թեկնածուների միջեւ, որպեսզի նախ վարչապետի թեկնածուին որոշեն: 50 հոգու միջեւ ընտրության ժամանակ Փաշինյանը կարող է ավելի հստակ ուղղորդումներ անել եւ իր ցանկալի թեկնածուներին բարձր հորիզոնականներում դնել: Ասենք, ԱՄՆ-ում նախկին դեսպան Լիլիթ Մակունցին համաժողովը չի ընտրի, սակայն ինքն ուզում է նրան ԱԺ նախագահ դարձնել: Դրա համար հարկավոր է, որ նա ամենաշատ ձայն ստացած կին թեկնածուն լինի եւ կանանց քվոտայով մեխանիկորեն երրորդ հորիզոնականը զբաղեցնի:

# ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ԴԵՖԻՑԻՏԸ ԿԼՐԱՑՎԻ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆԵՐՈՎ»

ԳԻՆ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Հեղուկ գազով մեքենա վարելն ավելի ձեռնտու էր, քան բենզինով՝ մինչեւ այն պահը, երբ այդ ապրանքատեսակի գինը Հայաստանով մեկ կտրուկ բարձրացավ, 250-270 դրամից հասնելով 320 դրամի: 1 լիտր բենզինը միջինում արժե 450 դրամ, եւ սա նշանակում է, որ շուտով Հայաստանում կրկին կսկսեն բենզինով մեքենա վարել:

Նոր ռեկորդային գինը՝ 320 դրամ լիտրի համար, արդեն քանի օր է՝ չի իջնում: Բազմաթիվ բենզալցակայաններում հեղուկ գազ չկա:

Որպես պատճառ՝ կառավարության վերջին նիստում նշվեց Լարսի անցակետի փակ լինելը: Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահը հայտարարեց. «Ամեն տարի Լարսում երբ որ ճանապարհային խնդիր է լինում, հեղուկ գազը թանկանում է, լուրջ պրոբլեմ գոյություն չունի, ու դեֆիցիտ գոյություն չունի»: Իսկ վարչապետը, որին այնքան էլ դուր չեկավ «պրոբլեմ չկա» ձեւակերպումը, հակառակը՝ պնդեց, որ կա պրոբլեմ, եւ որ «էս տարի դեկտեմբերին էդ հարցը էլ չի լինի»:

Լուծումը, ըստ Փաշինյանի, Ադրբեջանից հեղուկ գազ բերելն է: Այս ուղղությամբ ներկայում աշխատում է էկոնոմիկայի նախարարությունը՝ արդարացնելով այն կանխատեսումները, թե հեղուկ գազի դեֆիցիտ ստեղծելով, փորձում են խորացնել Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունները եւ հեղուկ գազը ոչ թե անմիջապես Ռուսաստանից, այլ Ադրբեջանով բերել:

Ինչպե՞ս եք բացատրում այն հանգամանքը, որ հենց ադրբեջանական էժան բենզինը ներմուծեցինք, Ռուսաստանից բերվող հեղուկ գազը թանկացավ, ի՞նչ կապ կա այս երկուսի միջեւ: Էկոնոմիկայի նախարարությունից պատասխանում են. «Գները փոխկապակցված չեն, այլ առկա է խնդիր, որը պայմանավորված է երկու հանգամանքով: Առաջինը՝ որ մենք հեղուկ գազ ներմուծում ենք Իրանից ու Ռուսաստանից: Բայց Իրանում, հայտնի հանգամանքներով պայմանավորված, առաջացել են ներմուծման հետ կապված պրոբլեմներ, իսկ Ռուսաստանի հետ խնդիրը հիմնականում Վերին Լարսի հետ է կապված: Խնդիրները հիմնականում հնարավոր կլինի լուծել, երբ արդեն կկարողանանք Ադրբեջանի տարածքով ռուսական հեղուկ գազը երկաթուղու միջոցով ներմուծել Հայաստան»: Ո՞ր մարմինն է վերահսկում հեղուկ գազի գինը: Նախարարությունից պատասխանում են. «Հեղուկ գազի գնի հետ կապված՝ նախարարությունը վերահսկողություն չի իրականացնում»: Խորհուրդ են տալիս դիմել Մրցակցության պաշտպանության հանձնաժողով, այնտեղից էլ, ինչպես միշտ, պատասխանում են, որ մեզ սխալ են ուղղորդել. «Եթե տվյալ շուկայում չկա գերիշխող դիրք ունեցող ընկերություն, գինը չենք կարող նայել»: Հասկանալի չէ, թե այս դեպքում ինչու է ՄՊՀ նախագահ Գեղամ Գրիգորյանը առհասարակ խոսում խնդրի մասին կառավարության նիստի ժամանակ՝ ասելով, թե ոչ մի արտառոց բան տեղի չի ունեցել:

Տնտեսագետ, ԱԺ պատգամավոր **Թադեւոս Ավետիսյանն** ասում է, որ գերիշխող դիրք ունեցողներ, անկասկած, կան, պարզապես իշխանությունը չի ուզում ուսումնասիրել այդ հարցը: «Կան այդտեղ գերիշխող դիրք ունեցողներ, ուղղակի իրենք չեն ուզում տեսնել, որ գործիք չկիրառեն նրանց նկատմամբ: Ես չգիտեմ՝ ովքեր են, բայց ակնհայտ է, որ եթե մի բան 100 կամ 150 դրամով է վաճառվում, ու մեկ էլ միասին կարողանում են պայմանավորվել ու գինը կրկնապատկել, սա նշանակում է, որ այդ ոլորտում ունենք գերիշխող դիրք: Հակառակ դեպքում, մրցակցային իրավիճակում սա չէր կարող տեղի ունենալ»: Ըստ Թադեւոս Ավետիսյանի, գազը թանկացել է պետական վատ կառավարման հետեւանքով, եւ ամենամեծ սխալը հենց գերիշխող դիրք ունեցողներին չանհանգստացնելն է: Ըստ նրա, պետական մարմինները պետք է օբյեկտիվ նայեն, թե թանկացման մեջ որ մասն է, որ մրցակցային դիրքը խախտելու եւ գերշահույթ ստանալու հետեւանք է եւ որը՝ օբյեկտիվ պատճառների:

Տնտեսագետ **Սուրեն Պարսյանը** կարծում է, որ Ադրբեջանով գազը պետք է բերել, բայց դա հեշտ չէ, եւ այդ գործընթացը կարգավորելու համար բավականին ժամանակ է պետք: «Այդ փոխադրումը կազմակերպելու համար բավականին թույլտվություններ է պետք ստանալ եւ Ադրբեջանում, եւ Վրաստանում, որ վառելիքի տարաները կարողանան այդ երկրների տարածքով՝ գնացքներով անցնել: Սա աշխատատար եւ ժամանակատար պրոցես է»,- ասում է նա: Այսինքն, մեկ-երկու ներմուծումներ պետականորեն կազմակերպելով, հեղուկ գազի գինը չի՞ կարգավորվի: «Մենք հիմնական խնդիրն ունենում ենք ձմռան ամիսներին, եթե ձմռան ամիսներին մեկ-երկու անգամ բերեն, այդ տատանումները կզսպվեն արդեն: Մեկ էլ խնդիր ենք ունենում ամռան պիկ սեզոնին, երբ որ արտահանումներն են ակտիվ, ու Լարսում կուտակումներ են լինում՝ դրա հետ կապված»,- պատասխանում է Պարսյանը:

Նա չի կարծում, որ եթե հեղուկ գազը 300 դրամ է դարձել, բոլորը սկսելու են բենզինով վարել: «Եթե հեղուկ գազը դառնա 300, իսկ բենզինը 430 դրամ է, էլի ձեռնտու է վարել հեղուկ գազով: Գազով վարողն էլի շարունակելու է հեղուկ գազ լցնել»: Ասում են՝ դա արվել է, որպեսզի Ադրբեջանից գազ բերեն: «Դա քաղաքական շահարկում է: Մենք հիմա լուրջ խնդիր ունենք, որովհետեւ Լարսը փակ է, Իրանում էլ խառը վիճակ է, եւ այլընտրանքային ճանապարհ չունենք: Հայաստանը չի կարող հրաժարվել այլընտրանքային ճանապարհներից»:

Հիշեցնենք. գազի դեֆիցիտը համընկավ բենզինի էժանացման հետ: 2025 թվականի դեկտեմբերի կեսերից, երբ սկսեց Հայաստան ներմուծվել ադրբեջանական բենզին, «պրեմիում» տեսակի նվազագույն գինը նվազեց 15 տոկոսով: Նախկին 510 դրամի փոխարեն այսօր այն միջինը մոտ 430 դրամ է: Դիզվառելիքի գինը, ըստ պաշտոնական տվյալների, նվազել է 2 տոկոսով, նաեւ «ռեգուլյար» տեսակի բենզինը՝ 8 տոկոսով: Նիկոլ Փաշինյանն իր հունվարյան ելույթներից մեկում սա ներկայացնում էր որպես «խաղաղության օգուտներ»:

# ԻՆՉՔԱՆ ՇԱՏ ՇՓՎԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ՀԵՏ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՅՆՔԱՆ ՇԱՏ ԿՎԱՐԿԱԲԵԿՎԻ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով՝ Եպիսկոպոսաց ժողովը տեղի կունենա Ավստրիայի Սանկտ Փյոլթեն քաղաքում, փետրվարի 16-19-ը: Նկատենք, որ այն նախատեսված էր հրավիրել 2025-ի դեկտեմբերին, սակայն հետաձգվեց, եւ իշխանությունները տոնում էին այդ առիթով՝ պնդում, որ Վեհափառը վախեցել է իրենցից, որ այն իրենց հերթական հաղթանակն է եւ այլն: Մենք այդ օրերին տեղեկություններ ունեինք, որ մեծ ճնշումներ են գործադրվել Եկեղեցու վրա, մասնավորապես՝ սպառնալիքներ են տեղացել, թե նոր ձերբակալություններ կլինեն, դրսից ժամանած եպիսկոպոսներին կարող են թույլ չտալ, որ հեռանան իրենց ծառայության երկրները, այդ մտավախություններն են եղել հետաձգման պատճառը:

Եպիսկոպոսաց ժողովի եւ այլ թեմաներով զրուցել ենք **Տեր Վրթանես քահանա Բաղալյանի** հետ:

**- Ինչո՞ւ է Մայր Աթոռը որոշել, որ դրսում հրավիրի ժողովը, հատկապես՝ Ավստրիայում, այս ժողովի հետ կապված՝ կա՞ն ճնշումներ Եկեղեցու նկատմամբ:**

- Այո, նորմալ է, որ նման իշխանություն ունենալու պարագայում Մայր Աթոռը դրսում է Եպիսկոպոսաց ժողով անցկացնում: Որպեսզի ժողովականներն ավելի անկաշկանդ լինեն, ճիշտը հենց դրսում ժողով անելն է: Այս իշխանություններն ունեն սովորություն՝ միջամտելու այն ամենին, ինչն իրենց չի վերաբերում: Ասեմ, որ 2018 թվականի դեպքերից հետո եպիսկոպոսների դիվանագիտական անձնագրերը իշխանավորները վերցրել են: Այժմ մի շարք եպիսկոպոսներ չունեն դիվանագիտական անձնագրեր:

**- Ո՞վ է վերցրել:**

- Իշխանությունները: Եպիսկոպոսները, արքեպիսկոպոսները դիվանագիտական անձնագրեր ունեին եւ կարողանում էին դրսում տեղի ունեցող միջոցառումներին անկաշկանդ մասնակցել եւ այլն: Հիմա նրանց զրկել են այդ ամենից, ուստի դրսում ժողով անելն այս պահին շատ ճիշտ որոշում է, որպեսզի ժողովական եպիսկոպոսների վրա ճնշումներ չլինեն: Լավ գիտեք, թե ինչեր են կատարվում: Գեւորգ Սարոյանն էլ այս գիշեր քահանաների նկատմամբ պրոցեսներ է կազմակերպել, բանակում եւս հոգեւոր սպասավորները ենթարկվում են ճնշումների: Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, որ ԱԱԾ աշխատակիցները բարեկամաբար, ընկերաբար են մոտենում իրադարձություններին, բայց մենք երբեք չենք ունեցել նման ընկերներ ու բարեկամներ, որ գան եւ մեզ նման խնդրանքներով դիմեն, իսկ մենք էլ մերժենք նրանց խնդրանքները: Դրսում ժողով անելը տալիս է անկաշկանդ լինելու հնարավորություն: Դրսի թեմերը Հայաստանում կարող են կաշկանդվել: Սա խելացի որոշում է, թեպետ աննախադեպ չէ, տարբեր առիթներով Եկեղեցին Հայաստանից դուրս միջոցառումներ կազմակերպում է: Նիկոլի օրոք այնպիսի բաներ են կատարվում, որ միամիտ սփյուռքահայ թեմի առաջնորդները կարող են զարմանքից քարանալ՝ եկեղեցում տեսնելով ԱԱԾ-ականներին: Կամ, ասենք, դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռի բակում բռնություն էր գործադրում, պատկերացնո՞ւմ եք՝ այդպիսի մեկը հանդիպի դրսի թեմերի առաջնորդներին: Ես ուրախ եմ, որ նման որոշում է կայացվել: Ինչքան շատ շփվեն Հայաստանի իրավապահ մարմինների հետ, Հայաստանն այնքան շատ կվարկաբեկվի, հավատացեք՝ մենք դրանից չենք ուրախանում, հակառակը: Դրսում ծառայող, հայրենիքը սիրող հոգեւորականները խիստ ծանր կտանեն՝ տեսնելով Նիկոլի կամակատարներին: Ավելի լավ է՝ այդ մարդիկ չտեսնեն այդ ամենը:

**- Կիրակի օրը Չարենցավանի եկեղեցու բակում, անհետ կորած զինծառայողներից մեկի մայրը, արցունքն աչքերին, խնդրում էր կաթողիկոսին, որ Նիկոլ Փաշինյանի ֆեյք «պատարագից» հետո մաքրման աշխատանքներ կազմակերպեն իրենց եկեղեցում, որպեսզի ինքը՝ որպես հավատացյալ, ամեն կիրակի կարողանա մասնակցել պատարագին, աղոթք անել ու դրանով սփոփվել: Տեղյա՞կ եք՝ արվո՞ւմ են նման մաքրման աշխատանքներ:**

- Նիկոլից հետո բոլոր եկեղեցիները պետք է ախտահանվեն:

**- Բայց ախտահանվո՞ւմ են:**

- Չենք ուզում այժմ որոշ կոնֆլիկտներ առաջացնել: Ամսի 15-ին Հովհաննես Մկրտչի ծննդյան օրն էր, ուզում էինք Կարբիից ոտքով ուխտագնացություն իրականացնել դեպի Հովհաննավանք: Բայց երբ եւս մեկ անգամ իմացանք, որ այնտեղ ոստիկանները հոգեւորականներից շատ են, կան նաեւ սադրիչներ, այդ պատճառով մենք այդպես էլ չգնացինք այնտեղ: Անպայման պետք է ախտահանել եկեղեցիները, ես համաձայն եմ տիկնոջ հետ, մենք նրա համար հնարավորություն կստեղծենք: Թալինում իրականացրել ենք աշխատանքներ, մյուս տեղերում էլ անպայման կանենք.... մենք բոլորի հետ փորձում ենք մեր հարաբերությունները լավ պահել, այդ թվում՝ Չարենցավանի քահանայի, սակայն այդ մարդկանց մի մասին շահագրգռել են, մի մասին՝ շանտաժի ենթարկել, բայց մենք փորձում ենք բոլորին ըմբռնումով մոտենալ, չլարվել ու սադրանքներին չտրվել:

ՈՂՋՈՒՅՆ

# ՄԵՆՔ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆՔ «ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՄԱՍՆԱԿՑԵՆՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Փետրվարի 1-ին կիիմնադրվի տարօրինակ անունով մի կուսակցություն՝ «Բոլորին դեմ եմ»: Նախաձեռնության հեղինակները մի խումբ երիտասարդներ են: Նրանցից մեկը՝ **Իշխան Գեւորգյանը**, կարճ ձեւակերպեց իրենց նպատակը՝ մեր ուզածը 100 օրվա մանդատ է:

«Կուսակցությունը հիմնադրվում է այն նպատակով, որ մասնակցի 2026-ի ընտրություններին եւ 100 օրվա ընթացքում երեք փոփոխություն կատարելուց հետո անցկացնի նոր ընտրություններ»,- ասաց նա եւ նշեց, որ առաջարկվող երեք փոփոխություններից մեկը վերաբերում է «դեմ եմ բոլորին» ընտրական քվեաթերթիկի վերականգնմանը, երկրորդը՝ կայուն մեծամասնության չեղարկմանը, իսկ երրորդը՝ ընտրական շեմի իջեցմանը: «Հրապարակը» զրուցել է «Բոլորին դեմ եմ» նախաձեռնության անդամ, քաղաքական գործիչ **Միքայել Նահապետյանի** հետ:

**- «Բոլորին դեմ եմ» անվանումը, ըստ էության, որոշակի շփոթություն է առաջացրել: Համացանցում որոշ օգտատերեր գրել էին, որ «Բոլորին դեմ եմ» նախաձեռնությանը միանալով, ըստ էության, մերժում են անխտիր բոլորին, ընտրությունների գաղափարին են դեմ արտահայտվում: Սակայն, իրականում, խոսքը նման անվանումով կուսակցության մասին է, որը մասնակցելու է ընտրություններին: Այսինքն, դուք ուզում եք բավարար քանակով ձայներ հավաքել, անցողիկ շեմը հաղթահարել եւ անցնել Ազգային ժողով: Բայց շատերը կարող են նաեւ մոլորության մեջ ընկնել: Ի դեպ, 90-ականների ընտրությունների քվեաթերթիկներում կար այդ տողը՝ «Բոլորին դեմ եմ», բայց հետո հանվեց դա: Սակայն այդ տողն այն մարդկանց համար էր, ովքեր չգիտեն՝ ում ձայն տան, բոլորին դեմ են, ըստ էության՝ մերժում են ընտրությունը եւ բոլորին: Այժմ իրավիճակը լրիվ այլ է: Քվեարկելով «Բոլորին դեմ եմ»-ին՝ ընտրում են կոնկրետ ուժի:**

- Քաղաքականության մեջ որեւիցե բան չի կարող շփոթմունք առաջացնել, հատկապես եթե այդ մասին խոսակցություններ են գնում: «Բոլորին դեմ եմ»-ը բոյկոտի կոչ չէ, հակառակը՝ ակտիվ մասնակցության, որպեսզի վարչական ռեսուրսով եւ այլ եղանակներով բերվող ձայները բարձր մասնակցության մեջ ունենան փոքր կշիռ, եւ ոչ ոք չկարողանա, իր ունեցած ռեսուրսներից օգտվելով, դառնալ թագավոր եւ միանձնյա իշխել Հայաստանը: Մենք ստեղծում ենք «Բոլորին դեմ եմ» ինքնալուծարվող կուսակցությունը, քանի որ առանց կուսակցության հնարավոր չէ ընտրություններին մասնակցել եւ բան փոխել: Հաջողության հասնելու դեպքում ստեղծելու ենք 100-օրյա կառավարություն, կկազմակերպենք նոր արտահերթ ընտրություններ, ինչից հետո կուսակցությունը կլուծարվի: Արդյունքում կստացվի, որ իշխող թիմը չի կարողանա պետական ռեսուրսներն օգտագործել իր վերարտադրման համար, եւ տեղի կունենա հավասար մրցապայքար՝ նոր կանոններով: Հայաստանում վերջապես մեկ անգամ կարող է տեղի ունենալ ընտրություն՝ առանց վարչական ռեսուրսի ու կողմնակալ մոտեցումների: Մեր առաջարկը սա է:

**- Այսինքն՝ Փաշինյանին հնարավորություն եք տալու մասնակցել ընտրություններին, սակայն մեկ տարբերությամբ՝ առանց վարչական ռեսուրսի:**

- Նիկոլ Փաշինյանը չի կազմակերպի այդ ընտրությունը, սակայն որեւէ կուսակցության առաջ արգելքներ դնելու ծրագրեր չունենք՝ ո՛չ իշխանական, ո՛չ ընդդիմադիր, միակ կուսակցությունը, որը չի մասնակցելու այդ արտահերթ ընտրություններին, «Բոլորին դեմ եմ»-ն է:

**- Այսինքն՝ պայքարը նորից ընդդիմության եւ իշխանության միջեւ է լինելու:**

- Գուցե նաեւ նոր ուժեր, ովքեր, նոր փոփոխություններից ոգեւորված, կարող են մասնակցել նոր ընտրություններին: Պետք է շեմն իջեցնել մեկ տոկոս, որպեսզի գաղափարների համար նոր դաշտ բացվի: Պետք է լայն դաշտ ստեղծել, իրար հետ համագործակցելու, կոալիցիաներ կազմելու: Երկիրը պետք է տանել քաղաքացիների մեծամասնության պատկերացումների ուղղությամբ, այլ ոչ թե մեկին՝ 20-22 տոկոս աջակցություն ունեցող, ամեն անգամ ընտրել, ով իր հերթին կսպառնա, ասելով՝ կամ համակերպվում եք, կամ նոր հեղափոխություն իրականացնում:

**- Հնարավո՞ր է իշխանություններն իրենց ձեռքի խամաճիկը դարձած ԿԸՀ-ի միջոցով կարողանան այնպես անել, որ ընտրություններին «Բոլորին դեմ եմ»-ը չմասնակցի, մերժեն գրանցումը, որովհետեւ անվանումը փոքր-ինչ կարող է խնդրահարույց լինել:**

- Օրենքում չկա ոչ մի դրույթ, որն իշխանություններին թույլ կտա արգելել կուսակցությունը: «Կուսակցությունների մասին» օրենքում չկա որեւէ խնդիր, այլ հարց է, որ եթե սոցիոլոգիան նրանց հուշի, որ մենք կարող ենք մասնակցության թիվը մեծացնել, ինչի արդյունքում Նիկոլի վարչական ռեսուրսների կշիռը կարող է ընկնել, դեռ մի բան էլ իրենց ձայն տվող քաղաքացիների մի մասն էլ մեզ կարող է միանալ, այդ պարագայում կարող են զոռբայաբար չգրանցել կուսակցությունը…..

**- Օնլայն հարթակ է ձեւավորվել՝ «Բոլորին դեմ եմ», երեկվա դրությամբ 200-ից ավելի մարդ էր միացել նախաձեռնությանը: Ինչի՞ համար է այն:**

- Այսօր արդեն 300-ից ավելի մարդ է միացել: Օնլայն հարթակը մի քանի նպատակով է ստեղծվել: Նախ, ցանկանում ենք համայնք ստեղծել, որը կքննարկի: Հարթակը նաեւ այն բանի համար է, որ համախոհ-համահիմնադիրներ գտնենք, որպեսզի ստեղծվի լուծարվող կուսակցությունը, ինչպես նաեւ՝ այդ հարթակը նրա համար է, որ մարդիկ կարողանան մեզ աջակցել: Համակարգի դեմ դուրս գալով՝ միամտություն կլինի կարծել, թե մենք կարող ենք աջակցություն ստանալ որեւէ ուժի կողմից: Մեզ ոչ ոք չի օգնելու:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԸՆՏՐԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԹՎՈՎ ՄԱՐԴԻԿ, ՓԱՇԻՆՅԱՆԻՆ՝ 650 ՀԱԶԱՐ

Օրերս նախկին ԲՀԿ-ական **Սերգեյ Բագրատյանը** «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ դարձավ: Նա կարծում է, որ որեւէ ոլորտ բարենորոգելու համար պետք է գործել «շատ կշռադատված, հանգիստ», այդ թվում՝ եկեղեցին: Ասում է. «Պետք է աշխատել հոգեւորականների հետ, կոնսենսուսի գալ, հասկանալ՝ ոնց կարելի է խնդիրը լուծել»:

**- Պարոն Բագրատյան, Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ պատարագներին Դուք ակտիվ մասնակցություն չեք ունենում, ինչո՞ւ, համաձայն չե՞ք Եկեղեցու դեմ իրականացվող քայլերի հետ: Դուք ի՞լ եք կարծում, որ եթե այսպես շարունակվի, Փաշինյանը նոր աղանդի հիմնադիր կդառնա, քանի որ Վեհափառը չի հեռանում, իսկ ինքն ու տասը եպիսկոպոս-արքեպիսկոպոսները Եկեղեցին «բարենորոգելու անվան տակ նոր կանոնադրություն են գրում, ինչ-որ նիստեր անում…**

- Համաձայն չեմ Ձեր այդ կարծիքի հետ, որ ես ակտիվ չեմ մասնակցում պատարագներին, ես եղել եմ Հովհաննավանքում, Խաչիկում, որտեղ որ մարզային այցելության հետ չի համադրվել… շաբաթ-կիրակի ես պարտադիր մարզեր եմ գնում, դա իմ գրաֆիկն է, այդտեղ մենք խնդիր ենք ունենում, կիրակի առավոտյան է պատարագը սկսվում, ես չեմ կարողանում մարզից վերադառնալ, մանավանդ՝ հիմա, որ եղանակային պայմաններն այդքան էլ լավը չէն: Բայց, մեծ հաշվով, ես իմ կարծիքը փոխանցել եմ հանրությանը. կա, ունեմ այդ մտահոգությունը, որ եթե Եկեղեցին ունի իր կանոնադրությունը, պետք է ենթարկվեն այդ կանոնադրությանը: Եթե մենք ուզում ենք բարենորոգել այդ ոլորտը եւ ընդհանրապես բոլոր ոլորտներն ենք բարենորոգում, պետք է անել շատ կշռադատված, հանգիստ, պետք է աշխատել հոգեւորականների հետ, կոնսենսուսի գալ, հասկանալ՝ ոնց կարելի է խնդիրը լուծել:

**- Ես ճի՞շտ հասկացա, որ իշխանությունների որդեգրած տարբերակն այնքան էլ ընդունելի չէ Ձեզ համար, Դուք եւս կարծում եք, որ սա կոշտ միջամտություն է Եկեղեցու գործերին:**

- Ես համարում եմ, որ Եկեղեցու, հոգեւորականների բարենորոգման կարիք կա: Ի վերջո, եթե մենք ցանկանում ենք, որ Հայ առաքելական եկեղեցին ծառայի իր նպատակներին, իսկ դա շատ կարեւոր է մեր պետության եւ ազգային անվտանգության իմաստով, հոգեւոր սնունդը հավասար է նյութական սննդին, եւ ամենակարեւորը՝ Եկեղեցու անելիքն է՝ հավատավոր հոտին բերել համախմբման եւ պայմաններ ստեղծել՝ հանրային զարգացման:

**- Այսինքն, իշխանությունը հասարակությանը սեւերի ու սպիտակների է բաժանում, բայց Եկեղեցի՞ն է մեղավոր, որ համախմբվածություն չկա:**

- Եկեղեցին, բարձրաստիճան հոգեւորականները բավականին լուրջ սխալներ գործեցին այն ժամանակ, երբ մասնակցություն ունեցան քաղաքական գործընթացներին, եւ ճիշտ կլինի, որ ինչպես դրվածքը կար, որ Եկեղեցին պետք է անջատ լինի պետությունից, պահվի այդ հարաբերությունը:

**- Որ Վեհափառը խոսում է Արցախի կորստից, արցախցիների մշակութային, հոգեւոր ժառանգությունը պահպանելուց կամ վերադարձից, դա քաղաքականությո՞ւն է:**

- Արցախի կորուստն ի՞նչ կապ ունի, երբ որ շարժումներ են սկսվում, հրաժարական են պահանջում:

**- Նկատի ունեք Բագրատ սրբազանի առաջնորդած Սրբազան շարժումը, բայց նա սառեցրել էր թեմական առաջնորդությունը:**

- Համաձայն եմ, բայց նույն՝ Ձեր նշած անձը պահանջում էր իշխանությունների, վարչապետի հրաժարականը, կարծում եմ՝ իրենք պետք է զբաղվեն հոգեւոր հարաբերություններով: Չեմ կարծում, որ ընտրված իշխանությունների առջեւ հրաժարականի պահանջ պիտի դնել:

**- Իսկ կաթողիկոսի հրաժարականը կարելի՞ է պահանջել, այն դեպքում, երբ Սահմանադրությամբ՝ իշխանությունն իրավունք չունի միջամտել Եկեղեցու գործերին:**

- Ընդունենք, որ մեր երկրում կաթողիկոսն ընտրվում է Ազգային եկեղեցական ժողովի կողմից, սահմանափակ մարդկանց միջոցով (կարծեմ՝ 400 հոգու), եւ մարդ, որ ընտրվել է 650 հազար մարդու կողմից, ինչպես

կարելի է պահանջել նրա հրաժարականը. այս պահանջներն անհամադրելի են:

Եկեղեցին կարող էր ինքը բարենորոգել իրեն՝ նույն կանոնադրությունը փոխելով, օրինակ, որ բարձրաստիճան հոգեւորականները կարող են ընտանիք ունենալ, կամ իրենք պետք է հեռանային, բայց ո՛չ այն արվեց, ո՛չ այն:

**- Ստեղծված իրավիճակի հանգուցալուծումը ո՞նց եք պատկերացնում, երբ Վեհափառն ինքնակամ չի հեռանում: Փաշինյանը նոր աղանդ կստեղծի:**

- Աղանդ ստեղծելը անհնար բան եմ համարում, Հայ առաքելական եկեղեցին չի կարող հանդուրժել որեւէ աղանդ, որեւէ կրոնական կազմակերպություն մեզ համար ընդունելի չէ, հետեւաբար, չկա նման խնդիր, խնդիրը միայն թնջուկը կարգի բերելն է:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀԱՐՑՈՒՄ

# ԻՆՉ Է ԹԱՔՑՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2025թ. դեկտեմբերի 24-ին տեղեկատվական հարցում եմ արել պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմում ՀՀ քանի՞ քաղաքացի է զոհվել, որից՝ քանի՞ զինվորական, քանի՞ քաղաքացիական անձ, այդ պատերազմում Արցախի Հանրապետության քանի՞ քաղաքացի է զոհվել, որից՝ քանի՞ զինվորական, քանի՞ քաղաքացիական անձ, 44-օրյա պատերազմում քանի՞ զինվորական եւ քաղաքացիական անձ է անհետ կորել, քանի՞ անձ է ներկայում գտնվում ադրբեջանական գերության մեջ:

Տեղեկատվական հարցմանս պատասխանը ստացել եմ հունվարի 14-ին, պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի ստորագրությամբ: Այնտեղ նշված է. «ՀՍՊ վարչությունում հաշվառված են 44-օրյա ռազմական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ինչպես նաեւ անհետ կորած եւ դատական կարգով մահացած կամ անհայտ բացակայող ճանաչված պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական, ենթասպայական եւ շարքային կազմերի զինծառայողները, ինչպես նաեւ՝ տարածքային պաշտպանությանը ներգրավված եւ կամավորագրված անձինք: Վերը նշված կատեգորիայի անձանց անվանացանկին հնարավոր է ծանոթանալ Զինապահ զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի պաշտոնական կայքում (zinapah.am): Միաժամանակ հայտնում եմ, որ 44-օրյա պատերազմում զոհվածների վերաբերյալ տեղեկատվությունն արդեն իսկ հրապարակված են»:

44-օրյա պատերազմի ավարտից անցել է 5 տարի եւ 2 ամիս, պաշտպանության նախարարն ինչո՞ւ հստակ չի պատասխանել զոհվածների, գերիների, անհետ կորածների թվի վերաբերյալ հարցերին, մանավանդ, որ այդ նախարարության վկայությամբ՝ պատերազմում զոհվածների վերաբերյալ տեղեկատվությունն արդեն հրապարակված են: Նկատի ունենալով հարցի կարեւորությունը եւ հանրության համար թեմայի զգայուն լինելը, պաշտպանության նախարարությունը պետք է շահագրգիռ լիներ այդ հարցում հստակություն մտցնելու, ոչ թե 2020 թվականի պատերազմում զոհվածների, գերիների, անհետ կորածների թվերի իսկության վերաբերյալ հանրության մեջ եղած լուրջ կասկածները խորացնելու:

Դեկտեմբերի 24-ին Սուրեն Պապիկյանին ուղղված հարցման մեջ նաեւ հարցապնդում էի արել. «2024 թվականին կատարված սահմանազատման հետեւանքով Նոյեմբերյանի սահմանագոտում գտնվող, ՀՀ տարածք հանդիսացող «Նոր տարի» հենակետը չպետք է հանձնվեր Ադրբեջանին, ի՞նչ պատճառով է այն հանձնվել: Ադրբեջանի հետ սահմանի քանի՞ հատվածում են ՀՀ զինծառայողները ծառայության վայր հասնելիս անցնում ադրբեջանական դիրքերով եւ այդ ընթացքում ստուգվում ադրբեջանցի զինծառայողների կողմից, դրա հետեւանքով ՀՀ սահմանը պաշտպանող զինծառայողները զենքի, զինամթերքի եւ դրանց քանակի ի՞նչ սահմանափակում են ունենում»: Այդ հարցերի վերաբերյալ ՊՆ-ից հայտնել են. «4-րդ եւ 6-րդ հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժվում է՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (տեղեկատվության տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական գաղտնիք, ըստ ՀՀ կառավարության 11.01.2024 թվականի N 53-Ն որոշմամբ հաստատված ցանկի 2-րդ եւ ՀՀ ՊՆ 16.0.2024թ.N 797-Լ հրամանի 4-րդ կետերի պահանջների»:

Սակայն «Նոր տարի» հենակետը մեկուկես տարի առաջ սահմանազատման անվան տակ հանձնվել է Ադրբեջանին, դրա հանձնումը հիմա ի՞նչ գաղտնիք է իրենից ներկայացնում: Իսկ Սեւ լճի մոտ զինծառայություն իրականացնող մեր զինծառայողներին ադրբեջանցիների կողմից ստուգելու մասին բազմիցս հրապարակումներ են եղել, եւ այդ հարցին հունվարի 13-ի մամուլի ասուլիսում ինքը՝ նախարար Սուրեն Պապիկյանն արդեն պատասխանել է. «Ուրեմն խնդիրը վերաբերում է դեռեւս 2021թվականի մայիսին ստեղծված իրադրությանը, ձեզ հայտնի Սեւ լճի մի դիրքի մասին է, որին հասանելիություն, ցավոք սրտի.., այսինքն՝ ընտրանքը հետեւյալն է. կա՛մ պիտի էդ դիրքը թողնենք, կա՛մ պիտի անցնենք ադրբեջանական դիրքի կողքով: Սա հստակ է, նոր չէ, ես չեմ դրա հեղինակը՝ որպես պաշտպանության նախարար, ես չեմ դրա միակ շահառուն: Բայց էն, որ էդտեղ դիրքը թողնելու պարագայում դուք ինձ պետք է մեղադրեք հայրենիքի ինչ-որ հատվածը զիջելու մեջ, մյուս ընտրանքը, մանավանդ մեր օրերում, երբ այսօր ունենք խաղաղություն փաստացի, եւ, ըստ էության, ինչ նկարագրում եք, դա տեղի չի ունենում... Այո, կա իրականություն, հետեւյալն է՝ մեր զինվորներն անցնում են ադրբեջանական դիրքի կողքով, ասպես կոչված՝ բլոկ-պոստով»:

Այսինքն, նախարարն արդեն իսկ հաստատել է այս փաստը, եւ դրանում պետական գաղտնիքի տարր էլ չկա: Փաստ է, որ նման ստորացուցիչ վիճակում մեր բանակը հայտնվել է Նիկոլ Փաշինյանի կողմից Սեւ լճի դիրքերն առանց կռվի հանձնելու հետեւանքով եւ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ժամանակ:

**Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ**

# Ո՞Վ Է ԴԱՍՏԻԱՐԱԿՎԱԾԸ՝ ՆԻԿՈ՞ԼԸ

Լրագրողների իրավունքների պաշտպան եւ ազատ խոսքի ջատագով ներկայացող Աշոտ Մելիքյանը՝ «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ-ի նախագահը, օրեր առաջ Հ1-ի եթերում իշխանական պրոպագանդիստ Պետրոս Ղազարյանի հետ փնովում էր լրագրողներին ու լրատվական դաշտը՝ մոռանալով, թե ինչ փողոցային բառապաշար եւ ինչ բնույթի էթիկական խախտումներ է իրեն թույլ տալիս այս երկրի վարչապետը: Փոխանակ իշխանություններին քննադատեն, զբաղված են լրագրողներին թիրախավորելով: Մի մարդ, որին ամենաշատը կարելի է մեղադրել լրատվական դաշտի թերությունների համար, քանի որ 30 տարի շարունակ դրսից գրանտներ է ստացել այդ դաշտի կարգավորման, առողջացման, ազատ խոսքի կայացման համար, չգիտես ում է մեղադրում: Ցավոք, հայաստանյան նախկին քաղհասարակության 99 տոկոսն այդպիսիներից է կազմված՝ ոչ մի պատասխանատվություն եւ ոչ մի սկզբունքայնություն՝ կոնկրետ պահի շահով թելադրված վարքագիծ: Մելիքյանը, մասնավորապես, իր պաշտպանության տակ էր առել Նիկոլ Փաշինյանին՝ վերջին բրիֆինգի ժամանակ հնչեցրած հարցերի համար մեղադրելով լրագրողներին: «Երեկվա բրիֆինգը կարելի է վերջին կաթիլը համարել, որ այլեւս հնարավոր չէ լռել: Ես չէի ասի, թե դա նորմ է դարձել, ուղղակի լրագրությունն իսկապես դեգրադացիա է ապրել վերջին 5-6 տարիներին: Կարծում եմ՝ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն կա... Կարեւոր է, որ հասարակությունը սոցիալական պահանջ ձեւավորի եւ ասի՝ սա չենք ընդունում, սա լրագրություն չէ եւ նույնիսկ քարոզչություն չէ... Այդ տեսակի լրագրողները նույնիսկ իրենց գործընկերներին չեն հարգում... Այդպիսի լրագրողներն այդպիսի միջոցառումներում պիտի տեղ չունենան»,- նշել Մելիքյանը՝ իր խոսքով նպաստելով, որ իշխանությունն առաջիկայում սահմանափակի լրագրողների ազատությունը: Իսկ Նիկոլ Փաշինյանի վարքագիծն էլ որակեց «զուսպ, հավասարակշռված». «Այդ առումով վարչապետի վարքն ինձ լիովին բավարարեց»: Մելիքյանի դիտարկմամբ՝ շատ լրագրողներ քաղաքական շահեր են սպասարկում:

Թեմայի մասին «Հրապարակը» գրուցել է Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ, 168.am կայքի գլխավոր խմբագիր **Սաթիկ Սեյրանյանի** հետ: Տիկին Սեյրանյանը, խոսելով նիկոլական երկու պրոպագանդիստների «լրջախոհ» դատողությունների մասին, նկատում է. «Այդ մարդիկ չունեն իրավունք՝ խոսելու լրագրողների անունից եւ, առհասարակ, լրագրող ներկայանալու, քանի որ նրանք ընդամենը կոնկրետ պրոպագանդիստներ են՝ այս իշխանությունների, եւ ոչ միայն: Առավոտից երեկո զբաղվում են մի բանով, ինչն իրենց չի վերաբերում: Այդ երկուսը հատկապես իրավունք չունեն խոսելու ինչ-որ մի լրագրողի դաստիարակված լինելու մասին: Երբ իրենց սիրելի վարչապետը պատրաստ է իր սեռական օրգաններն ի ցույց դնել սոցիալական ցանցերում եւ նման հայտարարություններ անել, երբ միջազգային մամուլն անգամ թարգմանում է այդ ամենը եւ սուր վերնագրերով հրապարակում դրանք, էլ ինչի՞ մասին կարող են այս մարդիկ խոսել: Ինձ բնավ չի հետաքրքրում, թե Նիկոլն իր մարմնի որ մասերը ում ցույց կտա, բայց քանի որ նա համարվում է Հայաստանի վարչապետը, այդ պահվածքը խիստ անթույլատրելի է: Ի՞նչ է արել լրագրողը, որ անդաստիարակ են անվանում: Նիկոլ Փաշինյանի գրքից կարդացել է հատվածներ: Այդ դաստիարակչական դասերը հիմա ո՞ւմ են ուղղված: Նրանք, ըստ էության, ընդունում են, որ Նիկոլ Փաշինյանն անդաստիարակ է: Կամ, ասենք՝ ի՞նչ է նշանակում՝ գրականություն երեւի չեն կարդացել: Ի՞նչ եք ասում, Պետրոս, լավ է գոնե վերջին շրջանում Նիկոլ Փաշինյանի տեքստերը կարդում ես, ո՞վ ես դու ընդհանրապես: Դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում լրագրությունը: Ընդամենը մի շարքային ինտերվյու վարող ես եղել, որը ծառայում է բոլոր իշխանություններին: Նույնիսկ վախենում էիր՝ խմբագիրների փակ հավաքների ժամանակ վախից կակազելով էիր հարց տալիս նախագահներին, մոռացե՞լ ենք այդ ամենը: Մարդը հիմա անձնական խնդիր է լուծում, իր կնոջ պաշտոնի հարցն է լուծում, որ աշխատանքից չհեռացնեն: Իսկ ո՞վ է Աշոտ Մելիքյանը եւ ի՞նչ է արել իր կյանքում՝ որպես լրագրող: Ի՞նչ իրավունքով է լրագրողական համայնքի անունից ներկայանում. շարքային գրանտակեր է, որը ծառայություններ է մատուցում: Թող պարզեն, թե Աշոտ Մելիքյանի ընտանիքի անդամները երբվանից ու որտեղ են աշխատում: Լրագրողական դաշտում, այո, ունենք էթիկայի հետ կապված խնդիրներ, բայց, ներողություն, երբ 2018 թվականից հետո բարձրաստիճան պաշտոն զբաղեցնողները, վարչապետը ամեն օր փողոցային բառամթերք են կիրառում, այդ բառապաշարով է խոսում նաեւ նրա կինը, նրա շրջապատը, ի՞նչ պետք է լիներ մամուլը: Մամուլը Մարս մոլորակի վրա առանձին գործունեություն ծավալող մարմին չէ: Խնդիրներ դաշտում միշտ են եղել, մեզ են սաստել՝ ավագները, մենք ենք սաստել, դա միշտ է եղել, բայց ո՞վ կարող է հիշել, որ երկրի ղեկավարը նման բառապաշարով խոսեր Եկեղեցու մասին, եկեղեցականի կամ որեւէ այլ քաղաքացու մասին: Ո՞վ է դաստիարակվածը՝ Նիկո՞լը: Այդ դեպքում թող ընտանիքներով շփվեն նրա հետ, բայց ո՛չ Հանրայինի եթերից: Մեր հարկերից սնվող հեռուստաընկերությունը դրա համար չէ»:

**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ԽՈՐՀՈՒՐԴ

# ԹՐԱՄՓԻ ԵՎ ՄԱԿՐՈՆԻ ՄԻՋԵՎ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԸՆՏՐՈՒՄ Է ԹՐԱՄՓԻՆ

Հիշո՞ւմ եք՝ մի ժամանակ ինչ ջերմ հարաբերությունների մեջ էր Փաշինյանը Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ, ոնց որ հարազատ եղբայրներ լինեին՝հաճախակի նրան հյուր էր գնում, Ֆրանսիան ներկայացնում Հայաստանի, եթե ոչ միակ, ապա գոնե գլխավոր բարեկամ եւ բարեխոս երկիր՝ ի վերջո, Մակրոնի քավորությամբ կնքվեց 2022 թվականի հոկտեմբերի 6-ի հայտարարությունը, որով Հայաստանը ճանաչեց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ հանձնեց Արցախը: Հիմա, երբ Միացյալ Նահանգների եւ Եվրոպայի միջեւ դիմակայությունը գնալով մեծանում է, ավելին՝ նախկին դաշնակիցները դառնում են գրեթե թշնամիներ, Փաշինյանը հերթական անգամ «քցում» է նախկին՝ դաշնակից հռչակված Ֆրանսիային եւ նրա նախագահ Էմանուել Մակրոնին ու անցնում է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմը: Փաշինյանը, ինչպես միշտ, փորձում է անցնել ուժեղի կողմը՝ համարելով, որ միայն ուժեղը կարող է երաշխավորել իր իշխանությունը, պաշտոնավարումը վարչապետի պաշտոնում:

Թրամփը հայտարարել է, որ Գազայի վերականգնման համար ստեղծում է Խաղաղության խորհուրդ, որի մշտական անդամակցությունը կարժենա 1 միլիարդ դոլար անդամավճար, իսկ ոչ մշտական անդամակցությունը կլինի անվճար: Բայց ոչ մշտական անդամները որեւէ բան որոշելու իրավունք չեն ունենա: Թրամփն ուզում է ՄԱԿ-ի նման մի կառույց ստեղծել, որտեղ վճար մուծող անդամները կունենան Անվտանգության խորհրդի անդամի կարգավիճա, բայց ոչ թե իրենց ունեցած աշխարհաքաղաքական աղդեցությանը համապատասխան, այլ՝ որովհետեւ փող են տաիս եւ կարգավիճակ գնում: Թրամփը, լինելով բիզնեսմեն, ամեն ինչ վերածել է փող աշխատելու աղբյուրի, այդ թվում՝ եւ ԱՄՆ քաղաքացիություն ստանալը: ԱՄՆ-ն գտնվում է խայտառակ ծանր ֆինանսական վիճակում. 2026 թվականի ֆինանսական տարում ԱՄՆ բյուջեի եկամուտները կանխատեսվում են 4,9 տրիլիոն դոլար, իսկ ծախսերը՝ 7,3 տրիլիոն, բյուջեի դեֆիցիտը կազմելու է 2,4 տրիլիոն, այն դեպքում, երբ անցած տարվա դեֆիցիտը եղել է 1,775 տրիլիոն դոլար: ԱՄՆ իշխանություններն ուզում են այդ բացը լրացնել իրենց ենթակա պետությունների հաշվին, այդ թվում՝ եւ եվրոպական, այսպես կոչված, դաշնակիցների: Խաղաղության խորհուրդը եւ Խաղաղության հիմնադրամը, ըստ էության, հարկատեսակ է՝ սահմանված ԱՄՆ վասալների համար:

Եվրոպական երկրները, որոնք նույնպես ֆինանսական վատ վիճակի մեջ են, չեն ուզում հավելյալ գումար վճարել ԱՄՆ ստեղծած հիմնադրամին: Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն արդեն հայտարարել է, որ իր երկիրը չի պատրաստվում Թրամփի ստեղծած խորհրդի մեջ մտնել: Թրամփն էլ ի պատասխան ասել է, որ երբ ԱՄՆ-ն 200 տոկոսանոց մաքսատուրք սահմանի ֆրանսիական շամպայնի եւ գինիների վրա, այդ ժամանակ Ֆրանսիայի դիրքորոշումը կփոխվի: Թրամփը Մակրոնին անվանել է հեռացող նախագահ՝ նկատի ունենալով, որ 2027 թվականին նրա նախագահության ժամկետն ավարտվում է, եւ նա այլեւս չի վերընտրվի կամ ԱՄՆ-ի կողմից չի վերանշանակվի:

Եվրոպական երկրները համերաշխություն են դրսեւորում՝ ԱՄՆ-ի կողմից իրականացվող հարձակումներին դիմակայելու համար: Գրենլանդիան գրավելու սպառնալիքները, եվրոպական երկրներին առավելագույն մաքսատուրքերով հարկելը, նրանց վրա հավելյալ հարկային պարտավորություններ դնելը՝ Խաղաղության խորհրդին միանալու տեսքով, ստիպում է վասալներին ըմբոստանալ, նրանք այլեւս չեն ուզում հանդուրժել ԱՄՆ կամայականությունները, համարում են, որ իրենց ուժերից վեր է ԱՄՆ ֆինանսական խնդիրներն իրենց վրա վերցնելը, եւ իրենք կարող են մնալ դրա տակ:

Ֆրանսիան եւ եվրոպական շատ երկրներ հայտարարել են, որ չեն պատրաստվում դառնալ Թրամփի ստեղծած Խաղաղության խորհրդի անդամ, ընդհակառակը՝ մտածում են, թե ինչ գործուն քայլեր կարող են համատեղ իրականացնել՝ ԱՄՆ նախագահին զսպելու համար, որոնցից մեկը ԵՄ-ի կողմից ամերիկյան պարտատոմսերի վաճառքը կարող է լինել, որը կազմում է 8 տրիլիոն դոլար՝ ամերիկյան պարտքի 25 տոկոսը, որը կարող է փլուզել ամերիկյան դոլարը եւ ծանր հարված հասցնել ԱՄՆ տնտեսությանը: Իսկ Նիկոլ Փաշինյանի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյանն ուրախությամբ ավետում է, որ Փաշինյանը ստացել է Թրամփի պաշտոնական հրավերը՝ Խաղաղության խորհրդին որպես հիմնադիր անդամ միանալու վերաբերյալ. «Վարչապետ Փաշինյանը սիրով եւ պատասխանատվությամբ ընդունել է առաջարկը՝ վերահաստատելով Հայաստանի հանձնառությունը խաղաղության առաջմղմանը»:

Սա եվրոպական համերաշխության դեմ ուղղված քայլ է, դրանով Փաշինյանն ուզում է ասել, որ չի պատրաստվում մաս կազմել ԱՄՆ-ի դեմ կազմակերպվող եվրոպական դիմադրությանը, որ իր տերը Միացյալ Նահանգներն է, ոչ թե Եվրամիությունը կամ դրա առանձին անդամներ, այդ թվում՝ Ֆրանսիան: Ինքը եվրոպամետ էր, քանի դեռ ԱՄՆ-ն ու ԵՄ-ն միասնական էին, իսկ հիմա, երբ նրանք հակադիր ճամբարներում են, ինքն անցնում է ուժեղի կողմը: Հարց է առաջանում. իսկ որտեղի՞ց Հայաստանին 1 միլիարդ դոլար՝ Խաղաղության խորհրդի հիմնադիր անդամ դառնալու համար: Իհարկե, Հայաստանի իշխանությունը նոր վարկ կվերցնի եւ այդ վարկով կօգնի ԱՄՆ տնտեսությանը՝ հաղթահարելու իր դժվարությունները: Խաղաղության խորհրդին միանալը կներկայացվի որպես Հայաստանի աննախադեպ հաջողություն, Հայաստանի միջազգային վարկի եւ հեղինակության հսկայական աճի եւ իշխանությունների կողմից իրականացված քաղաքականության ճշմարտացիության ապացույց: Իսկ դուք ի՞նչ էիք մտածում. հե՞շտ է լինել ամերիկյան վասալ կամ ստրուկ, գնացեք եւ հարցրեք այն միլիոնավոր աֆրոամերիկացիներին, որոնք հարյուրամյակներ շարունակ բանում էին ամերիկացի պլանտատորների դաշտերում՝ հանուն նրանց եւ ԱՄՆ բարեկեցության: Մենք էլ հիմա կսկսենք բանել ամերիկացիների եւ նրանց բարեկեցության համար, անկախ նրանից՝ հասկանում ենք դա, թե ոչ, ընդունում ենք, թե ոչ: Իսկ Խաղաղության հիմնադրամին միանալուց հետո ստիպված կլինենք հոգուտ ամերիկացիների բանել ավելի շատ: Երբ տիրոջ գործերը վատանում են, ամբողջ ծանրությունն ընկնում է ստրուկների վրա:

**Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

# ԼՌՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ ԿԱՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌ ԹԱՂՈՒՄԸ

Դիմում եմ մեր ինտելիգենցիային՝ եկեք միասին մտորենք: Երբ երկրում հակաիրավական, հակաօրինական որեւէ քայլ է արվում, իրավունք ունի՞ ինտելիգենցիան լռելու: Իսկ երբ երկիրը հայտնվել է համատարած քաոսի ու անօրինականությունների ճիրաններում, ո՞րն է ինտելիգենցիայի՝ ի վերուստ սահմանված դերը: Իրավունք ունե՞նք լռելու եւ ինտելիգենցիա կոչվելու: Կարճ ու հատու պատասխանն է՝ ոչ: Որովհետեւ ինտելիգենցիան կոչում չէ, կրթության մակարդակ չէ, ոչ էլ սոցիալական ինչ-որ «երկրորդ» պլանում գործող խումբ:

Ինտելիգենցիան բարոյական պարտավորություն է, անտարակուսելի եւ անառարկելի պարտականություն: Եթե մարդը վտանգը տեսնում է եւ լռում է՝ նա կարող է լինել կրթված, բայց նա ինտելիգենտ չէ:

Այսօր ինչո՞ւ է «լուռ» մեր ինտելիգենցիան, որո՞նք են այդ խոնարհ լռության պատճառները: Ամենայն հավանականությամբ՝

1. Վախը - ծնվում է ոչ թե կամ ոչ միայն բանտ ընկնելու ահից, այլ նաեւ պաշտոնից, դիրքից, գրանտից, եթերից, խաղաղ ապրելակերպի կորստի վախից, շառից-փորձանքից հեռու լինելու ցանկությունից:

2. Կոնֆորմիզմը - «թողեք՝ ես իմ գործն անեմ»:

3. Կեղծ չեզոքությունը - իբր բարձր բարոյական դիրք են բռնել, իրականում՝ փախուստ, մի ծակուռում կասկածելի անդորրի վայելում:

4. Հոգնածություն - ամեն ինչից: Իրականում հոգնածությունը չի արդարացնում լռությունը, երբ պետությունն է վտանգված:

Այս ամենը երկու բառով կարելի է բնութագրել՝ բարոյական դավաճանություն: Ո՛չ քաղաքական, ո՛չ կուսակցական, այլ՝ բարոյական: Որովհետեւ, երբ դու ունես խոսքի ուժ, գիտելիք, հեղինակություն եւ լռում ես ճակատագրական պահին, դա դառնում է դավաճանություն ոչ թե իշխանությանը, այլ՝ ժողովրդին, պետությանն ու պատմությանը:

Հայաստանում այսօր ամենաարագ զարգացող ոլորտը տնտեսությունը չէ, գիտությունը չէ, նույնիսկ արտաքին պարտքը չէ (թեեւ այն արդեն 15 միլիարդ դոլար է եւ շարունակում է աճել): Ամենաարագ զարգացողը «լռությունն» է: Լռություն՝ բարձր կրթությամբ, կոչումներով, դիպլոմներով, մրցանակներով ու գրանտներով: Երկիրը դանդաղ, բայց վստահ քայլերով գնում է դեպի պետականության սառը եզրը, իսկ մենք՝ հանդիսատեսներս, նստած ենք առաջին շարքերում՝ փոփքորնի կամ արեւածաղկի տուփը ձեռքներիս: Վարչապետը պարտք է վերցնում այնպես, կարծես վաղը պետություն չի լինելու, իսկ վերադարձնելու հարցը թողնում է այսօրվա եւ ապագա սերունդներին: Գումարները չեն դառնում գործարան, գիտություն, արտադրություն կամ աշխատատեղ. դրանք դառնում են պարգեւավճար, «մերոնց» բոնուս, «սեփական» գործարարների հարկային ներման թուղթ...

Մինչ այս ամենը տեղի է ունենում, մեր հարեւանները՝ Ալիեւն ու Էրդողանը, գիշատչի հանգստությամբ սպասում են: Նրանք չեն շտապում: Նրանք գիտեն՝ երբ պետությունը սկսում է ինքն իրեն եռալ, ինքն իրեն ներսից կրծել-հոշոտել, երբ հարվածում է սեփական Եկեղեցուն, սեփական պատմական հիշողությանը, սեփական սյուներին, այն երկար չի դիմանում: Եվ հենց այդ պատճառով Հայ առաքելական եկեղեցին դարձավ թիրախ. որովհետեւ այն վերջինն է, որ հիշեցնում է՝ այս հողում պետականություն է եղել, կա եւ կարող է լինել:

«Կործանիր հիշողությունը, եւ պետությունն ինքն իրեն կլուծարվի». սա ոչ թե դավադրության տեսություն է, այլ դասական իմպերիալ (իմպերիալ՝ վերաբերմունք, երբ մի երկիր կամ ազգ իրեն համարում է գերակա մյուսներից) բանաձեւ: Բայց ամենացավալին թշնամու հայացքը, նրա անթաքույց մտադրությունը չէ: Ամենավտանգավորը մեր ինտելիգենցիայի լռությունն է: Մարդիկ, ովքեր պիտի առաջինը զգային վտանգը, քանի որ ինտելիգենցիան միշտ ունեցել է յոթերորդ զգայարան՝ պատմական վտանգի զգացողությունը: Բայց այսօր նրանք կամ լուռ են, կամ զբաղված են «չեզոքությամբ», կամ թաքնվում են «քաղաքականությամբ չեմ զբաղվում» մանկական արտահայտության հետեւում:

Լռությունը դարձել է նոր գաղափարախոսություն:

Վախը՝ նոր փիլիսոփայություն:

Իսկ հարմարվողականությունը՝ բարոյական նորմ:

Պետությունը հիշեցնում է քամված նարնջի կեղեւ. հյութը գնացել է, կեղեւը՝ մնացել: Հարգելի ինտելիգենտներ, բա դուք ո՞ւր եք, ծակուռից ե՞րբ եք դուրս գալու, ե՞րբ եք խոսելու... Երբ երկիրն այրվում է, իսկ դու լռում ես, դու արդեն չես հանդիսանում դիտորդ, դու դառնում ես մոխրի մի մասը:



**ՀԳ.** *Ինտելիգենցիա՝ լատ. intelligens (intelligentis) - հասկացող, բանական: Մտավորականություն՝ մտավոր աշխատանքով զբաղվող, գիտության՝ տեխնիկայի եւ մշակույթի բնագավառներից մեկի անհրաժեշտ գիտելիքներ եւ կրթություն ունեցող մարդկանց ամբողջություն:*

**Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ**

# ԳՐԵՆԼԱՆԴԻԱՆ «ԿՌՎԱԽՆՁՈՐ» Է ԴԱՐՁԵԼ ԹՐԱՄՓԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻՋԵՎ

*Գրենլանդիան ԱՄՆ-ին բռնակցելու՝ նախագահ Թրամփի մտադրության ու սպառնալիքների ֆոնին Վաշինգտոնի ու եվրոպական մայրաքաղաքների միջև սկանդալը շարունակում է հասունանալ:*

ԵՄ մի շարք գերտերություններ հանդես են եկել Դանիայի Թագավորությանը պատկանող կղզու պաշտպանության օգտին՝ այդպիսով հարուցելով ամերիկացի առաջնորդի ցասումը: Կոնֆլիկտը վերջին օրերին միջազգային առաջատար լրատվականների թոփ թեման է՝ ավելի ակտուալ, քան ռուս-ուկրաինական պատերազմը:

Եվ այսպես, Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ 2026 թ. փետրվարի 1-ից Դանիայից, Նորվեգիայից, Շվեդիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Նիդերլանդներից եւ Ֆինլանդիայից ԱՄՆ ներկրվող բոլոր ապրանքների համար կգանձվի 10% հավելյալ մաքսատուրք: Այս մասին նա գրել է Truth Social սոցիալական ցանցում: Համեմատության համար նշենք, որ ներկայում ԵՄ ապրանքների համար գործում է 15% սակագին: Թրամփի փոխանցմամբ՝ հունիսի 1-ից սակագինը կբարձրանա մինչեւ 25%, եւ եվրոպական երկրները կվճարեն այս տուրքն այնքան ժամանակ, մինչեւ համաձայնություն ձեռք բերվի Գրենլանդիայի վերաբերյալ: ԱՄՆ նախագահը նշել է, որ ԱՄՆ-ն փորձում է կնքել այս գործարքն արդեն ավելի քան 150 տարի: Սպիտակ տան ղեկավարն ընդգծել է, որ Միացյալ Նահանգները «երկար տարիներ սուբսիդավորել է Դանիային, ԵՄ բոլոր երկրներին եւ այլ պետությունների»՝ նրանցից որեւէ մաքսատուրք չգանձելով: «Այժմ ժամանակն է, որ Դանիան փոխհատուցի դրա դիմաց. խաղաստեղանին դրված է համաշխարհային խաղաղությունը: Չինաստանն ու Ռուսաստանը ցանկանում են տիրանալ Գրենլանդիային, եւ Դանիան ոչինչ չի կարող անել դրա դեմ: Ներկայում նրանք պաշտպանության համար ունեն երկու թիմ, որոնցից մեկը ձեռք է բերվել վերջերս: Միայն ԱՄՆ-ն՝ նախագահ Դոնալդ Ջ. Թրամփի ղեկավարությամբ, կարող է խաղալ այս խաղը, այն էլ՝ շատ հաջող»,- ասել է ԱՄՆ նախագահը եւ շեշտել, որ վտանգված է Միացյալ Նահանգների եւ ողջ աշխարհի անվտանգությունը, ու հավաստիացրել է, որ Վաշինգտոնը պատրաստ է անհապաղ անցնել բանակցությունների:

Եվրոպացի առաջնորդների արձագանքը չի ուշացել. Թրամփի՝ Գրենլանդիան զավթելու առաջարկին 8 դաշնակիցների նկատմամբ նոր մաքսատուրքեր սահմանելու սպառնալիքը եվրոպական առաջնորդները դատապարտել են, հայտնում է BBC News-ը: Եվրոպական Միությունն անցած կիրակի Բրյուսելում արտահերթ նիստ է հրավիրել եւ պատրաստվում է ձեռնարկել ամենավճռական միջոցները Միացյալ Նահանգների դեմ, այդ թվում՝ 93 միլիարդ եվրոյի չափով մաքսատուրքեր, որպեսզի ԱՄՆ նախագահը չփորձի զավթել Գրենլանդիան, հաղորդում է Politico-ն՝ հղում անելով դիվանագետներին եւ պաշտոնյաներին: Կիրակի՝ հունվարի 18-ին, Բրյուսելում 3-ժամյա հանդիպումից հետո 27 անդամ պետությունների ներկայացուցիչները շեշտել են Թրամփին հակազդելու կոնկրետ ծրագրերի կարեւորությունը, եթե հաջորդ շաբաթ Վաշինգտոնի հետ բանակցություններով չլուծեն խնդիրը: Լրատվամիջոցը պարզաբանում է, որ 93 միլիարդ եվրոյի չափով պատասխան մաքսատուրքերը կարող են կիրառվել «շատ արագ»՝ համեմատած քննարկվող որոշ այլ տարբերակների հետ: Այլընտրանքային լուծում կարող է լինել, այսպես կոչված, հակահարկադրական գործիքի (ACI) կիրառումը, որը Բրյուսելը կարող է օգտագործել՝ ԱՄՆ բանկերի գործունեությունը սահմանափակելու, արտոնագրերը չեղյալ համարելու կամ ընկերություններին ծրագրային ապահովման թարմացումներից, հոսքային ծառայություններից եկամուտ ստանալը կանխելու համար: Սակայն դեռեւս ոչ մի կառավարություն չի դիմել Եվրահանձնաժողովին՝ այս գործիքն օգտագործելու համար:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը հայտարարել է, որ Վաշինգտոնի կողմից ՆԱՏՕ-ի դաշնակիցների նկատմամբ առեւտրային մաքսատուրքերի սահմանումը սխալ քայլ է: Լոնդոնը հստակ դիրքորոշում ունի Գրենլանդիայի հարցում. կղզին Դանիայի մաս է կազմում: Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն իր հերթին հայտարարել է, որ ԵՄ երկրները Թրամփի գործողություններին կարձագանքեն «միասնական եւ համակարգված ձեւով»: Նա հայտարարել է. «Սակագնային սպառնալիքներն այս համատեքստում անընդունելի են... Չենք տրվի ոչ մի ահաբեկման»: Շվեդիայի վարչապետ Ուլֆ Կրիստերսոնը հայտարարել է. «Թույլ չենք տա մեզ շանտաժի ենթարկել: Շվեդիան ներկայում ինտենսիվ քննարկումներ է անցկացնում ԵՄ մյուս երկրների, Նորվեգիայի եւ Միացյալ Թագավորության հետ՝ համատեղ պատասխան գտնելու համար»: Եվրոպական հանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտարարել է. «Տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն են: Սակագները կթուլացնեն տրանսատլանտյան հարաբերությունները եւ կարող են հանգեցնել վտանգավոր անկման»: Իսկ ԵՄ արտաքին քաղաքականության գերատեսչության ղեկավար Կայա Կալլասն ասել է, որ Թրամփի հայտարարությունից հետո «Չինաստանի եւ Ռուսաստանի համար, երեւի, լարված օր է լինելու»: «Հենց նրանք են օգուտ քաղում դաշնակիցների միջեւ առկա տարաձայնություններից»,- գրել է նա X սոցցանցում:

Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան հայտարարել է. «Եվրոպական Միությունը միշտ շատ հաստատակամ կլինի միջազգային իրավունքի պաշտպանության հարցում... որը, իհարկե, սկսվում է ԵՄ անդամ պետությունների տարածքից»: Դանիայի արտաքին գործերի նախարար Լարս Լոկե Ռասմուսենը նշել է, որ սպառնալիքն «անսպասելի էր»: Բացի այդ, բրիտանական The Economist ամսագրի տվյալներով՝ Եվրամիությունը կարող է քննարկել ամերիկյան ռազմական բազաների ապամոնտաժման հարցը, եթե Գրենլանդիան բռնակցվի Միացյալ Նահանգներին: Հրապարակման համաձայն՝ շատ եվրոպական երկրներ ցանկանում են, որ ամերիկյան բազաները մնան՝ անվտանգության նկատառումներից ելնելով, անկախ արկտիկական գործողություններից: Միեւնույն ժամանակ, այլ երկրներ կարող են դրանց ապամոնտաժման սպառնալիքը դիտարկել որպես դիրքորոշում: Այլընտրանքային լուծում կարող է լինել, այսպես կոչված, հակահարկադրական գործիքի (ACI) կիրառումը, որը Բրյուսելը կարող է օգտագործել՝ ԱՄՆ բանկերի գործունեությունը սահմանափակելու, արտոնագրերը չեղյալ համարելու կամ ընկերություններին ծրագրային ապահովման թարմացումներից, հոսքային ծառայություններից եկամուտ ստանալը կանխելու համար: Սակայն դեռեւս ոչ մի կառավարություն չի դիմել Եվրահանձնաժողովին՝ այս գործիքն օգտագործելու համար:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը հայտարարել է, որ Վաշինգտոնի կողմից ՆԱՏՕ-ի դաշնակիցների նկատմամբ առեւտրային մաքսատուրքերի սահմանումը սխալ քայլ է: Լոնդոնը հստակ դիրքորոշում ունի Գրենլանդիայի հարցում. կղզին Դանիայի մաս է կազմում: Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն իր հերթին հայտարարել է, որ ԵՄ երկրները Թրամփի գործողություններին կարձագանքեն «միասնական եւ համակարգված ձեւով»: Նա հայտարարել է. «Սակագնային սպառնալիքներն այս համատեքստում անընդունելի են... Չենք տրվի ոչ մի ահաբեկման»: Շվեդիայի վարչապետ Ուլֆ Կրիստերսոնը հայտարարել է. «Թույլ չենք տա մեզ շանտաժի ենթարկել: Շվեդիան ներկայում ինտենսիվ քննարկումներ է անցկացնում ԵՄ մյուս երկրների, Նորվեգիայի եւ Միացյալ Թագավորության հետ՝ համատեղ պատասխան գտնելու համար»: Եվրոպական հանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտարարել է. «Տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն են: Սակագները կթուլացնեն տրանսատլանտյան հարաբերությունները եւ կարող են հանգեցնել վտանգավոր անկման»: Իսկ ԵՄ արտաքին քաղաքականության գերատեսչության ղեկավար Կայա Կալլասն ասել է, որ Թրամփի հայտարարությունից հետո «Չինաստանի եւ Ռուսաստանի համար, երեւի, լարված օր է լինելու»: «Հենց նրանք են օգուտ քաղում դաշնակիցների միջեւ առկա տարաձայնություններից»,- գրել է նա X սոցցանցում:

Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան հայտարարել է. «Եվրոպական Միությունը միշտ շատ հաստատակամ կլինի միջազգային իրավունքի պաշտպանության հարցում... որը, իհարկե, սկսվում է ԵՄ անդամ պետությունների տարածքից»: Դանիայի արտաքին գործերի նախարար Լարս Լոկե Ռասմուսենը նշել է, որ սպառնալիքն «անսպասելի էր»: Բացի այդ, բրիտանական The Economist ամսագրի տվյալներով՝ Եվրամիությունը կարող է քննարկել ամերիկյան ռազմական բազաների ապամոնտաժման հարցը, եթե Գրենլանդիան բռնակցվի Միացյալ Նահանգներին: Հրապարակման համաձայն՝ շատ եվրոպական երկրներ ցանկանում են, որ ամերիկյան բազաները մնան՝ անվտանգության նկատառումներից ելնելով, անկախ արկտիկական գործողություններից: Միեւնույն ժամանակ, այլ երկրներ կարող են դրանց ապամոնտաժման սպառնալիքը դիտարկել որպես դիվանագիտական լծակ Միացյալ Նահանգների դեմ:

«Ամերիկայի համար չափազանց դժվար կլինի ռազմական ուժ տարածել Աֆրիկայում եւ Մերձավոր Արեւելքում՝ առանց Ռամշտայնի նման եվրոպական բազաներին մուտք գործելու»,- նշում է The Economist-ը՝ ընդգծելով այս օբյեկտների ռազմավարական նշանակությունը ամերիկյան զինվորականների համար: Հիշեցնենք, որ եվրոպական 8 երկիր արդեն զինվորականներ է ուղարկել Գրենլանդիա՝ Դանիայի շահերն ու կղզու անվտանգությունը պաշտպանելու համար: Փաստորեն, Եվրոպան մեծացնում է կղզում իր ռազմական ներկայությունը, ինչը հղի է լուրջ վտանգներով, եթե հաշվի առնենք Թրամփի վճռականությունը եւ հաջորդ հայտարարությունները, օրինակ, որով դիմել է Նորվեգիայի վարչապետ Յոնաս Գահր Ստյորեին՝ ասելով, որ «այլեւս պարտավորված չի զգում մտածել բացառապես խաղաղության մասին»:

ԱՄՆ նախագահի ուղերձը X-ում հրապարակել է PBS NewsHour-ի լրագրող Նիք Շիֆրինը: Նա հայտարարել է, որ այն ստացել է մի քանի կառավարական աղբյուրներից: «Հարգելի Յոնաս, հաշվի առնելով, որ Ձեր երկիրը որոշել է չշնորհել ինձ խաղաղության նոբելյան մրցանակը, եւ դրանց թիվը շարունակում է աճել, ես այլեւս պարտավորված չեմ զգում մտածել բացառապես խաղաղության մասին, չնայած այն միշտ կլինի առաջնահերթություն, եւ այժմ կարող եմ մտածել այն մասին, թե ինչն է ճիշտ եւ օգտակար Ամերիկայի Միացյալ Նահանգների համար»,- ասվում է գրառման մեջ: Թրամփը կրկին պնդել է, որ Դանիան չի կարող պաշտպանել Գրենլանդիան Ռուսաստանից եւ Չինաստանից, եւ կասկածի տակ է դրել կղզու նկատմամբ նրա ինքնիշխանությունը: «Եվ ինչո՞ւ պետք է այն նույնիսկ «սեփականություն» ունենա: Գրավոր փաստաթղթեր չկան. մի նավակ այնտեղ է ափ իջել մի քանի հարյուր տարի առաջ: Բայց մեր նավակները նույնպես այնտեղ են կանգ առել»,- ասել է Թրամփն իր ուղերձում եւ հավելել, որ աշխարհը լիովին անվտանգ չի լինի, մինչեւ Միացյալ Նահանգները չստանա «լիակատար վերահսկողություն Գրենլանդիայի նկատմամբ»:

**Արա ԱԼՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԳԱՑՎՈՒՄ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՈՒՆՉԸ

Հայաստանում ընտրությունները թեեւ հունիսին են, սակայն արդեն զգացվում է, որ դրանք «7 սարի հետեւում չեն»: Նախընտրական արշավը, բացի ներքաղաքական բովանդակությունից, նաեւ «լցվելու» է աշխարհաքաղաքականությամբ: Հայաստանի ղեկավարությունն իր համար ռազմավարական նպատակ է դարձրել Հարավային Կովկասում «խաղաղության խաչմերուկի» ձեւավորումը: Երեւանին այդ կոնֆիգուրացիայում վճռական դերակատարում է վերապահվում՝ գրում է ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը:

Արտաքին քաղաքական նախագծերի իրականացումը, որպես նախընտրական թեմա, ուղեկցվում է ներքաղաքական օրակարգի «թարմացմամբ»: Իշխանությունների ակնկալիքն այն է, որ ԱԺ ընտրություններում ամրապնդվեն իրենց դիրքերը, սակայն դա միանշանակ երաշխավորված չէ, քանի որ ընտրությունները, որպես կանոն, խիստ անկանխատեսելի են եւ կարող են, հակառակը՝ թուլացնել Փաշինյանի դիրքերը: «Այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում, հարեւանների ուշադրության կենտրոնում է: Այսպես, հունվարի 15-ին Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանն անդրադարձել է հայաստանյան ընտրական թեմային. «Մենք տեսնում ենք, որ Փաշինյանը ներկայում առաջատար է հանրային կարծիքի հարցումներում, եւ իրապես աջակցում ենք այն կառուցողական դերակատարմանը, որ նա ունենում է: Այդ գիծը եւ կամքը պետք է շարունակվեն»: Անկարան այդկերպ հստակ ազդակ է հղել իր համակրանքների առնչությամբ: Փաշինյանը Թուրքիայի համար դիտվում է որպես առաջիկա ընտրություններում հաղթող: Թուրք նախարարը, իհարկե, ուղղակի չասաց, որ իր կառավարությունն աջակցելու է Հայաստանի իշխող կուսակցությանը, սակայն հասկանալի է, որ այն «կառուցողական դերակատարումը», որը Ֆիդանը վերագրում է Հայաստանի ներկայիս իշխանություններին, չի վերաբերում ՀՀ կառավարության ընդդիմախոսներին»:

Ֆիդանի հայտարարությունը չէր կարող չհայտնվել հայկական մամուլի եւ բլոգերների ուշադրության կենտրոնում: Ընդդիմադիր կեցվածք ունեցողները Անկարայից հնչած գնահատականը համարեցին հաստատում այն բանի, որ Փաշինյանի ընտրած գիծը թուրքամետ է եւ հակազգային: «Ծանոթ մեկնաբանություն է, երբ ընդդիմադիր գործողությունները մեկնաբանվում են որպես արտաքին ուժերին սպասարկելու գործողություններ: Նույն Փաշինյանն իր ընդդիմադիրներին մեղադրում է Հայաստանի դեմ հիբրիդային գործողություններ իրականացնելու մեջ: Սակայն եկեք իրերի դրությանը նայենք առանց էմոցիաների՝ սթափ: Անկարայի համար Հայաստանի «ապաղարաբաղացումն» ուղղակի շահերից է բխում: Այս թրենդը Հայաստանի հասարակության ներսում, չասած՝ նաեւ քաղաքական շրջանակներում, աջակցություն ունի: Այն անհնար է համարել ինտրիգների հետեւանք, որոնք նյութվում են արտասահմանից: Մարդիկ տարիներ շարունակ ձգվող հակամարտություններից եւ անկայունությունից պարզապես հոգնում են: Այլ հարց է, որ Թուրքիան եւ Ադրբեջանը, որին չպետք է մոռանալ երբեք, այդ տրամադրություններն օգտագործում են իրենց նպատակների համար: Տարօրինակ կլիներ, եթե հանդես գային իրենք իրենց դեմ»,- նշում է Մարկեդոնովը:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ԱՆՏԱՆԵԼԻ Է, ԵՐԲ ԱՄԵՆ ԻՆՉ ՏԱՆԵԼԻ Է

Քանզի թունավոր նյութերով (տոքսիններ) հագեցած ծուխը ցրտի պատճառով վեր չի բարձրանում, չի նոսրանում, իսկ մարդիկ շնչում են այդ թույնը եւ տառապում սրտային, շնչառական եւ այլ հիվանդություններով: Քաղաքապետը մի կարեւոր երեւույթ բաց թողեց, որ այդ տերեւները լցվում են նաեւ ստորգետնյա հեղեղատար խողովակների վանդակածածկ դիտահորեր (լյուկեր), եւ սովորականից մի փոքր ավելի անձրեւի դեպքում փողոցների երկայնքով գոգավոր հատվածները վերածվում են վենետիկյան ջրանցքների: Քաղաքապետը չխոսեց նաեւ Երեւանի գերհագեցած կենտրոնի շարունակական կառուցապատումից, ավտոմեքենաների աճող առատությունից, հատկապես՝ սպորտային, առանց խլացուցիչի սուրացող ավտոմեքենաների արագությունից եւ աղմուկից, էլ չխոսենք ահավոր խցանումներից, մեքենաներից արտանետվող կապույտ ծխից եւ շմոլ գազից: Անհնար է դա հերքել, չի կարելի այդ մասին չխոսել, որ Երեւանի կենտրոնը շնչահեղձ է լինում: Նույնիսկ որոշ բնապահպաններ համոզում են, թե շմոլ գազում թունավոր նյութերն ավելի շատ են, քան այրվող տերեւների ծխում:

Ասեք, ո՞ւմ հավատալ… Գուցե ասելն ու չասելը նույնպես շահի խնդիր են, այլ ոչ անկեղծ հոգատարություն: Եթե քաղաքապետը չի անկեղծանում ու ահազանգը չի հասկանում, ուրեմն, Երեւանի կենտրոնն առողջարան է եղել՝ չենք իմացել, ուստի կարելի է մայթերի, բակերի խնամքի կարոտ սաղարթախիտ ծառերը կտրել, տեղում առանց սաղարթի թփեր աճեցնել ու տարածքներ կառուցապատել:

Նորույթ չէ, որ ցանկացած նորակառույց կամ եղածի վերափոխում (հարկերի ավելացում, նկուղների ընդարձակում, կցակառույցներ…) իրականացվում է Երեւանի գլխավոր հատակագծի եւ քաղաքաշինական, ճարտարապետական, ինժեներական պահանջների (նորմերի) համաձայն: Նախագծման ընթացքը համաձայնեցվում է կադաստրային հատակագծի (ամփոփահատակագծի) հետ: Անխուսափելի բյուրոկրատական քաշքշուկներից հետո նախագիծը կամ ուղարկվում է լրամշակման, կամ ստանում շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն: Փաստենք, որ Երեւանի նշված երկու հատակագծերը տեխնիկապես պետք է նույնական (պատճեններ) լինեն, մի տարբերությամբ, որ կադաստրայինում պատկերված է այն, ինչը որ տեղում կա, իսկ գլխավոր հատակագծում դրան ավելացված է գալիք 20 տարվա հեռանկարով Երեւանի քաղաքաշինական զարգացման սխեմատիկ մտապատկերը (տեսլականը): Իսկ թե այդ մտապատկերը որքանով է լրջմիտ հաշվարկներով ու նորմերով հիմնավորված՝ այլ հարց է: Այստեղ է, որ լուրջ խնդիր է ծագում՝ այդ երկու հատակագծերի որոշ տեղամասերում նույնականությունը խախտված է, հայտնի չէ՝ որ հատակագծում է պատկերը ճիշտ արտացոլված: Դրա համար տեղում լրացուցիչ չափումներ են անում, ճշտում ու վերացնում անկապակցումը (լյուֆտը): Դա տեւական թղթարարություն է, փողապտույտ, քաշքշուկ: Ի դեպ, այդ շեղումը որոշ տեղերում հասնում է մետրերի: Այս «հիվանդությունից» տեղյակ են բոլորը՝ ե՛ւ իշխանությունները, ե՛ւ պատվիրատու-կառուցապատողները, բանկիրները, բնակարանների առքուվաճառքի գործակալներն ու սպասարկողները (լյումպեն-պրոլետարներ, կոլաբորացիոնիստներ, ռենտիեներ): Այս իրողությունը, որպես «երկնքից թափված մանանա», մեծահարուստների եւ չինովնիկների շահերի համատեղում է եւ ստվերային լուրջ գումարների պտույտի «խայծ»: Լավ, հնարավոր չէ՞ այս սուղ պայմաններում բավարարվել մեկ հատակագծով, ասենք՝ կադաստրայինով: Ճշտել բոլոր թերությունները եւ պատճենի վրա դաջել հեռանկարային սխեմատիկ մտապատկերը: Արդի դրությամբ անզուսպ գումարներով նոր հատակագիծ է մշակվում, իսկ անկապակցությունները մնում են հատակագծերի վրա՝ այլ եւ այլ նպատակներով:

Փաստն այն է, որ Երեւանի քաղաքաշինությունն օտարվել է պետական գործառույթից եւ հայտնվել մասնավոր կառուցապատողի թակարդում, քանզի քաղաքաշինությունը՝ հանձին իշխանությունների հանդուրժողականությունը վայելող օլիգարխների ու չինովնիկների, վերաձեւավորվել եւ դարձել է նեղխմբակային (կորպորատիվ) փողարտադրության պրոկսի (գաղտնի) ձեռնարկություն: Իսկ գլխավոր եւ կադաստրային հատակագծերը դարձել են իրավահատակագծային խթանիչներ:

Ճարտարապետությունից՝ էլ չխոսենք, այն ընկալվում է որպես անշարժ գույք՝ հաճախ խրտնեցնող շքեղ կամ ոչ իր տեղում գտնվող առանձնատուն ու բարձրահարկ երկնաքեր (տես՝ «Հրապարակ» օրաթերթի բազում հոդված-ահազանգեր. «Քաղաքաշինություն-ճարտարապետություն հակամարտությունը թեժանում է» (14.01.2024), «Դամոկլյան սրի ճոճքի տակ» (14.05.2024) հոդվածները):

Զարմանալի չէ, որ Երեւանն աննախադեպ արագությամբ ընդարձակվում է, համալրվում ամուր, հարմարավետ ու թանկ բարձրահարկերով, համալիր-թաղամասերով: «Ովքե՞ր են ապրելու այդ համալիրների հարմարավետ բնակարաններում» հռետորական հարցը ոչ մի մտավորական չի համարձակվում հղել բանուգործը թողած, կաթողիկոսի ետեւից ընկած վարչապետին: Ակներեւ է, որ վարչապետը շրջաբերական է իջեցրել բոլորին՝ չհամարձակվեք… Իսկ խնդիրն այլ տեղում է. հզորացնել Հայաստանի գլխավոր փողաբեր օրգանը՝ Երեւան քաղաքի գրավչությունը, դրանով՝ բնակարանաշինության ճոխ առատությամբ, ուրախացնել անտարբեր տանելիությամբ տոգորված հանրությանը, հետն էլ՝ ավելացնել իշխանության համակիրների շարքերը: Առաջին հայացքից թվում է, թե, իսկապես, մեր տնավեր բնակիչների համար են սնկի պես բազմացող այդ թանկ թաղամասերը: Իսկ ինչո՞ւ չէ, գուցե այլոց համար է նաեւ, հը՞…

Ներկայիս ընթացող նախընտրական քարոզարշավում, այդ նորակառույցների առատությունն արդեն ռիսկային է, քանզի Երեւանի պատճառով, այո, հենց Երեւանի պատճառով ավելի է բեւեռացվում հանրապետության բնակչության տարբաշխվածությունը: Տեսնում ենք, չէ՞, թե ինչպես են սահմանամերձ բնակավայրերը դատարկվում, դառնում անպաշտպան: Խաղաղության պայմանագիրն էլ կիսատ-պռատ է, մի կարեւոր ստորագրություն պակասում է: Փաստացի խաղաղության միակ «երաշխիքը» վարչապետի հերթական սուտն է, որը, անշուշտ, երաշխիք չէ: Դե ինչ, չեղած խաղաղության երաշխիքը սահմանամերձ գյուղերից ճարահատյալ ինքնաբռնագաղթն է, Երեւանում մի կերպ տեղավորվելու մոլուցքը:

Ի դեպ, կասկածներ կան, որ մեր բանակում ծառայության երկու տարին կես տարով կրճատելու որոշումը դիվահար բնակչությանն իշխանամետ դարձնելու հերթական փորձն է: Անշուշտ, այդ որոշումը շատ է ուրախացրել մեր դրացի պատվիրատուներին: Գուցե այս պայմանի կատարումով մեզ կից պատվիրատուն բավարարվի եւ ստորագրի խաղաղության պայմանագիրը: Իսկ ո՞վ գիտի…

Անշուշտ, ՀՀ գործող իշխանություններին ամեն գնով կատաղած փողեր են պետք: Մի՞թե իշխանական բրգաձեւ կառավարությունում չկան մակաբույծ (անպետք դարձած) ենթակառույցներ: Օրինակ. արդեն ո՞ւմ է պետք «Հայաստան» համահայկական՝ առանց տնօրենի հիմնադրամը, մյուսը՝ կրթության եւ այլնի նախարարությանը ենթակա Լեզվի պետական կոմիտեն, որն իր պատմական առաքելությունն արդեն կատարել է, իսկ հիմա չունի իր գործառույթը հիմնավորող գեթ մի լծակ: Տեսեք խանութների, սպասարկման սրահների օտարալեզու, արտառոց, խոշորատառ անվանումները ու մի պուճախում խեղճացած հայատառ անհասկանալի գրառումները: Տարիներ են անցնում, ու այդպես էլ չի պարզվում՝ «Աղբի տեղը աղբամա՞նն է», թե՞ «Աղբի տեղը աղբամանում է»…Սրանք իշխանությունների համար մանրուքներ են: Այ, ակնհայտ առաջնահերթ են Անկախության հռչակագրի խոտանումը, որպես քաղաքական խաղիկներ՝ երկու անգամ փչացրած ՀՀ Սահմանադրությունը նորով վերջնականապես ավերելը: Իսկ եթե մեր մեջ քնեցրած արժանապատվությունը արթնանա, եւ մի պահ նայենք հայելու մեջ, գուցե տեսնենք, որ բազում քաղաքական տգետ քայլերի՝ սխալների, մեղքերի, կորուստների, զոհերի մեծագույն բաժինն իսկ մեր մեջ է՝ մեր հանցավոր անտարբերության, իներտության, 27-ամյա խեղված հոգեբանության մեջ:

Սրանից է նեղվում ոչ այնքան հայտնի երգի խոսքը. «Անտանելի է, երբ ամեն ինչ տանելի է»: Գուցե իշխանական «գրագետ ընտրանին» կարդա ամերիկացի ժամանակակից մարդաբան Դեւիդ Գրեբերի «Անպետք աշխատանքներ» աշխատությունը, որտեղ հեղինակը հիմնավորում է, որ անպետք աշխատանքը զբաղվածության տեսակ է՝ հիմնովին անիմաստ, անօգուտ կամ վնասաբեր այնքան, որ աշխատողն անգամ չի կարողանում արդարացնել այդ անպետքության գոյությունը (գրքից մի հատվածի թարգմանությունը նախաձեռնեց «Էպիգրաֆ» գրախանութը, թարգմանիչ՝ Գոհար Գրիգորյան):

**ՀԳ.** *Անպետք աշխատանքը նաեւ դավաճանության տեսակ է. դավաճանում ես քեզ, մտերիմներիդ, ընկերներիդ, երկրիդ: Անհերքելի է Վանո Սիրադեղյանի խոսքը. «Չի կարող լինել ընկերոջ դավաճանություն, որ չավարտվի Հայրենիքի դավաճանությամբ»:*

*Վերջերս Երեւանի քաղաքապետը կոչով դիմեց երեւանցիներին, թե փողոցների մայթերին ցրիվ եկած տերեւները պետք է կուտակել, բայց չայրել:*

**Արամայիս ԱՍԼԱՆՅԱՆ**

# «ԼՈՒՍՆԱՔԱՐԸ». ԴԵՏԵԿՏԻՎ, ՈՐՆ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

«Լուսնաքարը» Վիլքի Քոլինզի հեղինակած վեպի էկրանավորումն է: Վեպն իր հերթին, որ գրվել է 1868 թվականին, համարվում է առաջին լիարժեք դետեկտիվ ստեղծագործությունը, որտեղ սահմանվել են այն կանոնները, որոնք իրենց հերթին ձեւավորել են 20-21-րդ դարերի դետեկտիվ կինոյի ժանրը: Գործողությունները կատարվում են մերձքաղաքային կալվածքում: Գործող անձանց թիվը սահմանափակ է: Այս սկզբունքի հիման վրա ձեւավորվել է դետեկտիվ ժանրի ենթաժանրերից մեկը՝ «հերմետիկ դետեկտիվը», որի կանոններով ստեղծագործություններ ունի նաեւ Ագաթա Քրիստին: Փորձառու սերժանտ Քաֆը եւ երիտասարդ Ֆրանկլին Բլեյքը նույն գործն են «հետաքննում», եւ այդ համատեքստում դիմակայություն կա նրանց միջեւ: Այսկերպ ստեղծվում է հետաքննողների դուետի սկզբունքը, ովքեր տարբեր մեթոդներով են հետաքննում գործը: Այս սկզբունքի զարգացումն է համարվում Հոլմս-Վաթսոն կամ Պուարո-Հեսթինգս համագործակցությունը: Քոլինզը վարպետորեն կարողանում է ստեղծել «կեղծ հետքեր», որոնք հանդիսատեսի կամ ընթերցողի ուշադրությունը շեղում են իրական հանցագործից, ինչը եւ կարեւոր տարր է համարվում կինոսցենարի համար: Պատումն իրականացվում է մի շարք կերպարների անունից: Դա կինոյում թույլ է տալիս նույն իրադարձությունը դիտարկել տարբեր կերպարների տեսանկյունից: Թե՞ վեպում եւ թե՞ կինոյում հատկապես սյուժեն հետաքրքիր է դառնում գաղութային անցյալի եւ «անիծյալ» գանձի թեմաների արծարծումով:

Վեպը, ի դեպ, էկրանավորվել է BBC-ի կողմից, 1972, 1996 եւ 2016 թվականներին: Էկրանավորումներից յուրաքանչյուրն իր յուրահատկությունն ունի: Իսկ պատումի կենտրոնում սերժանտ Կաֆն է, որն առաջին պրոֆեսիոնալ խուզարկուի կերպարն է հանդիսանում՝ ըստ էության: Նա ավանտյուրիստ հերոս չէ կամ ճշմարտություն որոնող ռոմանտիկ ասպետ, այլ անալիտիկ եւ խորազնին դիտորդ, մարդ, որն ուշադիր է դետալներին, վերլուծում է ու կատարում եզրահանգումներ՝ հանցագործությունը բացահայտելիս: Նրա կերպարը նախատիպային է եղել թե՞ Շերլոք Հոլմսի, թե՞ Էրքյուլ Պուարոյի կերպարների համար: Գողացված «Լուսնաքարը»՝ ադամանդը, նաեւ սիմվոլ է, որն իր մեջ պարունակում է մի քանի իմաստ՝ բրիտանական կայսրական անցյալից մինչեւ անիծվածության մոտիվ եւ բարոյական պատասխանատվություն: Այս ամենի շնորհիվ, գումարած նաեւ ռեժիսորական վարպետությունը, «Լուսնաքարն» օրինակ է այն բանի, թե ինչպես դետեկտիվը կարող է լինել ոչ միայն տրամաբանական առեղծված, այլ նաեւ՝ վիզուալ առումով՝ հագեցած դրամա:




**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՍԿԶԲՈՒՄ ՎԵՐԱՆՈՒՄ Է ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԵՏՈ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Արման ԱԲՈՎՅԱՆ

Հայկական տեղեկատվական «տարածքում» հաճախ են հնչում «պայծառ ապագայի», «քաղաքակրթական ընտրության» եւ «միակ ճիշտ ճանապարհի» մասին մանտրաներ, եւ այս ամենը ներկայացվում է բացառապես երկու հարթության մեջ:

Առաջինը՝ խաղաղության իբր կարելի է հասնել միայն եւ բացառապես թուրք–ադրբեջանական տանդեմի բոլոր, ընդգծում եմ՝ բոլոր պայմանների կատարման համատեքստում: Երկրորդը՝ պետության ինքնիշխանությունն ու անվտանգությունն ապահովելու համար պետք է շարժվել դեպի «Արեւմուտք»: Ընդ որում, երկրի ինքնիշխանության հիմնական սպառնալիք է հռչակվում եվրասիական, ավելի ճիշտ՝ ռուսական գլոբալ կենտրոնը:

Այս կարգախոսների ներքո հասարակությանը համառորեն պարտադրվում է մի ուղեգիծ, որը գործնականում քիչ է հիշեցնում անկախ պետության զարգացում, ավելի շատ՝ արտաքին ուժային կենտրոնների օգտին ինքնիշխանությունից աստիճանական հրաժարում (TRIPP-ը նման մանիպուլյացիաների դասական օրինակ է):

Առանձնահատուկ մտահոգություն է առաջացնում այն հանգամանքը, որ այս ուղեգիծն իրականացվում է ոչ թե ուղիղ, այլ միջնորդավորված՝ թուրք–ադրբեջանական տանդեմի հետ մերձեցման միջոցով՝ ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի «զգայուն կառավարման» ներքո: Վերջին տարիների իրականությունը հստակ ցույց է տալիս. Հայաստանի կողմից արվող ցանկացած միակողմանի «զիջում հանուն խաղաղության» անխուսափելիորեն ուժեղացնում է Թուրքիայի եւ Ադրբեջանի դիրքերը, որոնք իրենց հերթին հետեւողականորեն իրականացնում են Հայաստանն անկախ սուբյեկտայնությունից զրկելու եւ իրական ինքնիշխանությունը նսեմացնելու ծրագիրը:

«Տարածաշրջանային ինտեգրման» ցուցանակի տակ Հայաստանին առաջարկվում է՝ հրաժարվել սեփական բանակցային դիրքերից, լեգիտիմացնել հայերի հանդեպ կիրառված թուրքական ուժի «արդյունքները», ինտեգրվել մի տարածաշրջանային ճարտարապետության մեջ, որտեղ Հայաստանին հատկացված է օբյեկտի, ոչ թե սուբյեկտի դեր:

Ավելի պարզ ասած՝ խոսքը հավասարների խաղաղության մասին չէ, այլ հաղթողների եւ պարտվողների խաղաղության, որտեղ Հայաստանին համառորեն վերապահվում է ամենաստորացուցիչ դերը՝ առանց ձայնի իրավունքի, բայց հնազանդվելու պարտավորությամբ: Հատկապես ցուցադրական է այն փաստը, որ գրեթե բոլոր այն երկրներում, որտեղ իշխանությունը փաստացիորեն պետությունը տարել է քաղաքական ինքնուրույնության կորստի, կիրառվել է նույն սխեման՝ հասարակություններին վախի ներշնչում «ռուսական սպառնալիքով», անվտանգության ավանդական ճարտարապետության կոտրում, կախվածություն այն կենտրոններից, որոնք ուղղված են պետության ապամոնտաժմանը:

Այս տրամաբանության մեջ Ռուսաստանը հանդես է գալիս ոչ թե որպես իրական վերլուծական գործոն, այլ որպես համընդհանուր վախեցնող կերպար, որի համատեքստում՝ ճնշվում է այլախոհությունը, վարկաբեկվում է ցանկացած այլընտրանք, արդարացվում են նույնիսկ բացահայտ հակապետական քայլերը:

Մոլդովան ամենատեսանելի եւ ամենաանհանգստացնող օրինակներից է: Ընտրություններից առաջ գործող իշխանությունը հիստերիկորեն վախեցնում էր հասարակությանը «ռուսական սպառնալիքով», հնչում էին հայտարարություններ՝ իբր պատրաստվող «գուբեռնիզացման» մասին, ընդդիմախոսները պիտակավորվում էին որպես «Կրեմլի գործակալներ»: Ընտրություններից հետո հռետորաբանությունը կտրուկ փոխվեց, սկսվեց մոլդովական պետականությունից հրաժարվելու բաց քարոզը, Ռումինիային միանալու գաղափարը ներկայացվեց որպես «բնական եւ քաղաքակիրթ ճանապարհ», ինքնիշխանությունն ու անկախությունը փաստացի հայտարարվեցին «հնացած հասկացություններ»: Եվ այս ամենը՝ նույն անվտանգության, ժողովրդավարության եւ եվրոպական ապագայի կարգախոսների ներքո:

Այսօր Հայաստանն արագ շարժվում է նմանատիպ սցենարով. ազգային շահերը փոխարինվում են դրսից թելադրված աշխարհաքաղաքական ուղենիշներով, երկրի անվտանգությունը դիտարկվում է ոչ թե հայ ժողովրդի շահերի տեսանկյունից, այլ «տարածաշրջանային կայունության»՝ ուրիշների համար հարմար տրամաբանությամբ, հասարակությանն աստիճանաբար ներշնչվում է միտքը, որ «իրական» ինքնիշխանությունը ենթադրում է ռուսների հետ հարաբերությունների պարտադիր խզում: Սակայն պատմությունը ցույց է տալիս. այն պետությունները, որոնք կամավոր հրաժարվել են ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունքից, վերանում են: Ճիշտ է՝ ոչ անմիջապես:

Սկզբում վերանում է արտաքին քաղաքականությունը, հետո՝ պաշտպանությունը, ապա՝ տնտեսությունը, եւ միայն վերջում դրոշն ու օրհներգը վերածվում են դեկորատիվ ատրիբուտների: Ինքնիշխանությունը հնացած երեւույթ չէ, այլ՝ գոյատեւման պայման: Հայաստանի համար իրական ինքնիշխանության եւ իսկական անկախության հարցը ոչ աբստրակտ հասկացություն է եւ ոչ էլ փիլիսոփայական վեճերի առարկա: Սա ֆիզիկական, քաղաքական եւ ազգային գոյատեւման հարց է:

«Լուսավոր ապագան», որը կառուցվում է հիմնարար զիջումների, հիպոթետիկ պատերազմի վախի եւ արտաքին կառավարման վրա, գրեթե միշտ ավարտվում է նույն կերպ՝ պետության կորստով: Եվ եթե այսօր այս թեմաների շուրջ իշխանություններին չտրվեն անհարմար հարցեր, վաղը պարզապես չի լինի ոչ հարց տալու հնարավորություն, ոչ էլ հարցի «սուբյեկտը»:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 21.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՖԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԵԼԱԿՈՒՄ

Արեգ ՍԱՎԳՈՒԼՅԱՆ

Խաղաղությունը վերածվել է թավշամոլների նոր քաղաքական գաղափարախոսության: 1990-ականներին՝ Արցախյան ազատամարտի շրջանում, ՀՀՇ-ն սոցիալական ծանր կացությունը հիմնավորում էր պատերազմով, եւ մարդկանց պարզաբանում էին, որ արցախյան կոնֆլիկտն է պատճառը, որ դուք վատ եք ապրում, երբ պատերազմն ավարտվի, ամեն ինչ կկարգավորվի: Հայաստանում 30 տարի անց պաշտոնապես 650 հազար մարդ աղքատ է, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ ավելի շատ: Հիմա ո՞րն է պատճառը՝ խաղաղությո՞ւնը, որ մարդիկ հայտնվել են սոցիալական եւ իրավական անարդարության թիրախում, թե՞ ապաշնորհ կառավարումը, որն ամեն քայլափոխին սպառնում է հավանական պատերազմով եւ այլ արհավիրքներով:

Մեծ չէ՞ այն փրկագինը, որը մենք ազգովի պետք է վճարենք հանուն նիկոլյան խաղաղության, որի մասին իշխանահաճո սոխակները (ԶԼՄ-ներ, անհատներ, կուսակցություններ եւ այլ արբանյակներ) դայլայլում են ամեն օր: Արցախի հանձնմամբ ոչ թե փակվեց պանդորայի արկղը, այլ՝ բացվեց: «Արցախը Հայաստան է, եւ վերջ»-ը փոխարինվեց «Արեւմտյան Ադրբեջան» հասկացությամբ, որը մարտահրավեր է ոչ թե ՀՀ քաղաքական եւ տարածքային ինքնիշխանությանը, այլ իր մասշտաբներով ընդգրկում է ողջ Հայաստանը: Ո՛չ նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայի եւ ո՛չ էլ օգոստոսի 8-ի վաշինգտոնյան հռչակագրում գրված չէ ոչինչ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վրա հարձակման, կաթողիկոսի գահընկեցման եւ Նիկոլի ինքնաօծման, ՀՀ սահմանադրության փոփոխության, 4-րդ հանրապետության հռչակման, ներքին սոցիալական բեւեռացման, հասարակությանը սեւ-սպիտակի տարաբաժանելու, աստղաբաշխական պարգեւավճարներով ցնցուղների ընդունման եւ նեղ ցեղախմբով խարխճանքների կազմակերպման, թոշակառուներին ծաղրուծանակի ենթարկելու, բանակի կրճատման, պետական համակարգի կազմալուծման, դատական համակարգի ոչնչացման, իշխանությունների կոռումպացման, հոգեւորականների, քաղաքական գործիչների, լրագրողների, դասախոսների, փաստաբանների հետապնդման եւ արդարադատության համակարգում «քաղբանտարկյալ» հասկացության ինստիտուցիոնալացման եւ այլ շատ բաների մասին: Ի դեպ, այս երեւույթների մասին գրված չէ նաեւ թավշյա խաղաղապաշտների կուսակցական կամ կառավարության ծրագրերում:

Պատերազմը վերածել են սպառնալիքի, իսկ խաղաղությունը՝ իրենց վերարտադրման գործիքակազմի եւ լուրջ դեմքերով կառուցում են նոր՝ «իրական Հայաստան», որը, ըստ էության, իրականության հետ ոչ մի աղերս չունի, որովհետեւ ՀՀ սուվերեն տարածքից 20 հազար հեկտար (200 ք/կմ) գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ, իսկ Սեւ լճի մոտի հայկական մարտական հետնակետ մեր զինվորները շարժվում են ազերիների օղակի միջով: Հիմա հռետորական հարցադրում. ո՞րն է այդ՝ խաղաղություն ասվածը, եւ որտե՞ղ է մեր ինքնիշխանությունը: Ակամայից հանգում ենք մի տրագիկոմեդիկ մտայնության, որ Հայաստանի Հանրապետությունն անկախ է այնքանով, որքանով որ իրենից ոչինչ կախված չէ: Որքան այս իշխանությունները խոսում են մշտնջենական խաղաղության մասին, այնքան պատերազմի հավանականությունն ավելի է աճում, իսկ ինքնիշխանության մասին իրենց գերուրույն դատողություններով՝ պետությունն անխռով եւ հաշվենկատորեն մղում են վիլայեթացման հորիզոնական: Հանրային համերաշխության եւ սոցիալական արդարության գաղափարները պետք է լինեն գերակա՝ տրոհված հասարակության վերամիավորման եւ ժողովրդի առաջնորդման ազգային-քաղաքական օրակարգի ձեւավորման առանցքում:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am